«ԲԼԵՍՍ» Ունիվերսալ Վարկային Կազմակերպություն ՍՊԸ

Ֆինանսական հաշվետվություններ

2017թ-ի դեկտեմբերի 31-ին
ավարտված տարվա համար

Աուդիտոր՝

Բովանդակություն

Անկախ աուդիտորական եզրակացություն	3
Շահույի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն	4
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	5
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն	6
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	7
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	8

«ՋԵՆԵՐԱԼ ՍՏԱՆԴԱՐԴ ՔԸՆՍԱԼԹԻՆԳ» ՍՊԸ

Թումանյան 8, 0001,
Երևան, Հայաստան

Հեռ. +374 60 742222
Ֆաքս +374 60 742222, ներքինը 102
Էլ. հասցե general@gsc.am

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Բլեսս» ՈՒՎԿ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության մասնակիցներին

Կարծիք

Մեր կողմից իրականացվել է «Բլեսս» ՈՒՎԿ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ «Կազմակերպություն») կից ներկայացված ֆինանսական հաշվետվությունների աուդիտը, ընդ որում այդ հաշվետվությունները ներառում են 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիրը և այլ բացատրական տեղեկատվություն:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Կազմակերպության ֆինանսական վիճակը 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքները և դրամական միջոցների հոսքերը հաշվետու տարվա համար՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների:

Կարծիքի արտահայտման հիմքեր

Մենք աուդիտն իրականացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՍՏ) համապատասխան: Համաձայն որի պարտականությունները ներկայացված են մեր եզրակացության «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Կազմակերպությունից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի Պրոֆեսիոնալ հաշվապահների էթիկայի օրենսգրքի (ՀԷՄՍԽ օրենսգիրք) և Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական հաշվետվությունների աուդիտի նկատմամբ կիրառելի էթիկայի պահանջների, և մենք կատարել ենք էթիկային վերաբերող մեր այլ պարտականություններն այս պահանջներին և ՀԷՄՍԽ օրենսգրքին համապատասխան: Մենք գտնում ենք, որ ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավականաչափ են և համապատասխան՝ մեր կարծիքի հիմքն արտահայտելու համար:

Ղեկավարության պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ համաձայն ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճիշտ ներկայացման համար, ինչպես նաև այնպիսի ներքին վերահսկողության համակարգի համար, որը համարում է անհրաժեշտ սխալի, խարդախության արդյունքում առաջացող էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվություններ պատրաստելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Կազմակերպության անընդհատ գործելու կարողության գնահատելու համար, բացահայտելով, կիրառելի լինելու դեպքում, անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև կիրառել անընդհատության հիմունքով հաշվառումը, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է կամ լուծարել կամ դադարեցնել գործունեությունը, կամ չունի դրանից խուսափելու իրատեսական այլընտրանք:

Ղեկավարման օղակներում ներգրավված անձիք պատասխանատու են Կազմակերպության ֆինանսական հաշվառման գործընթացի վերահսկողության համար:

Անկախ աուդիտորական եզրակացության
շարունակություն

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում, որ ֆինանսական հաշվետվությունները, ամբողջությամբ դիտարկված, զերծ են սխալի կամ խարդախության արդյունքում առաջացող էական խեղաթյուրումներից, և ներկայացնել աուդիտորական եզրակացություն, որը ներառում է մեր կարծիքը: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում, և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք, առանձին, կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ սույն ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

Որպես ԱՄՍ-ների համաձայն իրականացվող աուդիտի մաս՝ մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական դատողություն աուդիտի ընթացքում: Ինչպես նաև՝

- Բացահայտում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվություններում առկա էական խեղաթյուրումների ռիսկը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավականաչափ և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ, կամ ներքին վերահսկողության համակարգի շրջանցում:
- Ձեռք ենք բերում աուդիտին առնչվող ներքին հսկողության համակարգի մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Կազմակերպության ներքին հսկողության համակարգի արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- Եզրահանգում ենք ղեկավարության կողմից անընդհատության հիմունքով հաշվառում կիրառելու տեղին լինելու մասին և հիմք ընդունելով ձեռք բերված աուդիտորական ապացույցները, կատարում ենք հետևություն, թե արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որ կարող է լուրջ կասկածներ հարուցել Կազմակերպության անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրակացնենք, որ գոյություն ունի էական անորոշություն, ապա մենք պետք է մեր աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրենք ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, այդ բացահայտումների ոչ համապատասխան լինելու դեպքում՝ ձևափոխենք մեր կարծիքը: Մեր եզրակացությունները հիմնված են մինչև մեր աուդիտորական եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա դեպքերը կամ հանգամանքները կարող են հանգեցնել Կազմակերպության կողմից անընդհատության հիմունքով գործունեության դադարեցմանը:
- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարված հաշվապահական գնահատումների և առնչվող բացահայտումների հիմնավորվածությունը:

Ղեկավարությանը, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողության համակարգին վերաբերող նշանակալի թերացումների մասին:

Տիգրան Հարությունյան
Տնօրեն,
25 մայիսի 2018թ.

«ՋԵՆԵՐԱԼ ՍՏԱՆԴԱՐՏ ԱՉՍԱՆԴԻՆԳ» "GENERAL STANDARD CONSALTING" 00104006

Անդրանիկ Հարությունյան
Աուդիտի ավագ մենեջեր

հազար դրամ	**Ծնթգ.**	**2017թ.**	**2016թ.**
Տոկոսային եկամուտ	4	1,555,798	1,535,845
Տոկոսային ծախս	4	(632,865)	(652,045)
Զուտ տոկոսային եկամուտ		**922,933**	**883,800**
Միջնորդավճարների գծով եկամուտ	5	6,525	700
Միջնորդավճարների գծով ծախս		(587)	(429)
Զուտ (վնաս)/շահույթ փոխարժեքային տարբերություններից		(47)	(163)
Այլ գործառնական եկամուտ		21,603	37,451
Այլ գործառնական ծախսեր		(23,605)	(26,006)
Գործառնական եկամուտ		**926,822**	**895,353**
Արժեզրկման հակադարձումներ/ (կորուստներ)		25,097	(19,712)
Աշխատակազմի գծով ծախսեր	6	(261,553)	(339 349)
Այլ ընդհանուր վարչական ծախսեր	7	(66,547)	(52,162)
Շահույթ մինչև շահութահարկով հարկումը		**623,819**	**484,130**
Շահութահարկի գծով ծախս	8	(122,373)	(99,430)
Տարվա շահույթ		**501,446**	**384,700**
Այլ համապարփակ եկամուտ՝ առանց շահութահարկի			
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների վերագնահատման պահուստ			
- Իրական արժեքի զուտ փոփոխություն		52,687	146,785
Տարվա այլ համապարփակ եկամուտ		**52,687**	**146,785**
Ընդամենը տարվա համապարփակ եկամուտ		**554,133**	**531,485**

Հայկ Ստեփանյան
Գլխավոր տնօրեն

25 մայիսի 2018թ.

Լիլիթ Նաջարյան
Գլխավոր հաշվապահ

հազար դրամ	Ծնթգ.	2017թ.	2016թ.
ԱԿՏԻՎՆԵՐ			
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	9	70,379	15,377
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ	10	1,401,717	1,311,994
Ժամկետային ավանդներ բ անկերում	11	2,651,578	1,932,549
Հաճախորդներին տրված վարկեր	12	6,124,985	6,252,630
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ		85,795	19,562
Վաճառքի համար պահվող ակտիվներ	13	39,451	39,451
Հետաձգված հարկային ակտիվներ	8	-	-
Շահութահարկի կանխավճար		-	-
Այլ ակտիվներ		11,654	13,943
Ընդամենը ակտիվներ		**10,385,559**	**9,585,506**
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ			
Պարտավորություններ			
Վարկեր և փոխառություններ	14	6,123,769	6,123,660
Ռեպո համաձայնագրեր բանկերի հետ	15	1,220,206	1,011,762
Հետաձգված հարկային պարտավորություններ	8	46,500	30,018
Այլ պարտավորություններ	16	146,145	125,260
Ընդամենը պարտավորություններ		**7,536,620**	**7,290,700**
Սեփական կապիտալ			
Կանոնադրական կապիտալ	17	1,700,000	1,700,000
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների վերագնահատման պահուստ		217,222	164,535
Չբաշխված շահույթ		931,717	430,271
Ընդամենը սեփական կապիտալ		**2,848,939**	**2,294,806**
Ընդամենը պարտավորություններ և սեփական կապիտալ		**10,385,559**	**9,585,506**

Հայկ Ստեփանյան
Գլխավոր տնօրեն

25 մայիսի 2018թ.

Լիլիթ Նաջարյան
Գլխավոր հաշվապահ

հազար դրամ	Կանոնադրական կապիտալ	Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների վերագնահատման պահուստ	Չբաշխված շահույթ	Ընդամենը
Մնացորդը առ 1 հունվարի 2016թ.	200,000	17,750	1,545,571	1,763,321
Ընդամենը համապարփակ եկամուտ				
Տարվա շահույթ	-	-	384,700	**384,700**
Այլ համապարփակ եկամուտ				
Կանոնադրական կապիտալի ավելացում	1,500,000	-	(1,500,000)	-
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների իրական արժեքի զուտ փոփոխություն՝ առանց շահութահարկի	-	146,785	-	**146,785**
Ընդամենը համապարփակ եկամուտ տարվա համար	-	**146,785**	**(1,115,300)**	**532,485**
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2016թ.	**1,700,000**	**164,535**	**430,271**	**2,294,806**
Մնացորդը առ 1 հունվարի 2017թ.	**1,700,000**	**164,535**	**430,271**	**2,294,806**
Ընդամենը համապարփակ եկամուտ				
Տարվա շահույթ	-	-	501,446	**501,446**
Այլ համապարփակ եկամուտ				
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների իրական արժեքի զուտ փոփոխություն՝ առանց շահութահարկի	-	52,687	-	**52,687**
Ընդամենը համապարփակ եկամուտ տարվա համար	-	**52,687**	**501,446**	**554,133**
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2017թ.	**1,700,000**	**217,222**	**931,717**	**2,848,939**

Հայկ Ստեփանյան
Գլխավոր տնօրեն

25 մայիսի 2018թ.

Լիլիթ Նաջարյան
Գլխավոր հաշվապահ

հազար դրամ	Ծնթգ.	2017թ.	2016թ.
ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ			
Ստացված տոկոսներ		1,523,120	1,478,716
Վճարված տոկոսներ		(621,659)	(641,808)
Ստացված զուտ միջնորդավճարներ		22,730	37,674
Աշխատավարձ և այլ վճարումներ		(185,227)	(221,861)
Վճարված հարկեր		(204,685)	(209,729)
Այլ գործառնություններ		(34,454)	(21,705)
Գործառնական ակտիվների (աճ)/նվազում			
Ժամկետային ավանդներ բ անկերում		(716,196)	(526,000)
Հաճախորդներին զուտ տրված վարկեր		134,701	113,283
Ռեպո համաձայնագրեր բանկերի հետ		208,916	(30,083)
Դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից		**127,246**	**(21,513)**
ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՄԲ ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐ			
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների կապիտալ ներդրումների նվազեցում (ավելացում)		(10,510)	(350)
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների զուտ ձեռքբերումներ		(61,593)	(1,784)
Ներդրումային գործունեությամբ օգտագործված դրամական միջոցների հոսքեր		**(72,103)**	**(2,134)**
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՄԲ ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐ			
Ստացված վարկեր և փոխառություններ		-	-
Ֆինանսական գործունեությամբ օգտագործված դրամական միջոցների հոսքեր		-	-
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ		**55,143**	**(23,647)**
Փոխանակման փոխարժեքի փոփոխության ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա		17	-
Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեսկզբի դրությամբ		15,216	38,863
Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեվերջի դրությամբ	9	**70,376**	**15,216**

Հայկ Ստեփանյան
Գլխավոր տնօրեն

25 մայիսի 2018թ.

Լիլիթ Նաջարյան
Գլխավոր հաշվապահ

1 Նախապատմություն

(ա) Հիմնական գործունեությունը և ընդհանուր տեղեկություններ

«Բլեսս» Ունիվերսալ Վարկային Կազմակերպությունը (այսուհետև՝ Կազմակերպություն) հիմնադրվել է Հայաստանի Հանրապետությունում որպես սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն 2007թ.-ի փետրվարի 19-ին կայացած Կազմակերպության հիմնադիրների ժողովի թիվ 1 որոշմամբ: Կազմակերպության հիմնական գործունեությունը միկրո և միջին չափի անհատական, բիզնես և սպառողական վարկերի տրամադրումն է Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի տարածքում: Կազմակերպության գործունեությունը կարգավորվում է ՀՀ կենտրոնական բանկը (վարկային կազմակերպության անժամկետ լիցենզիա թիվ 18 տրված 2007 թ.-ի ապրիլի 17-ին):

Գլխամասային գրասենյակի գտնվելու վայրը և իրավաբանական հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Տպագրիչների փողոց, շենք 9 թիվ 70: Կազմակերպությունը ունի 1 մասնաճյուղ Լեռնային Ղարաբաղում:

Ընկերության բաժնետերեր և վերջնական վերահսկող կողմ են հանդիսանում՝ Հակոբ Հակոբյանը (50%) և Արսեն Սիքայելյանը (50%):

Կապակցված կողմերի հետ գործարքների մանրամասները ներկայացված են ծանոթագրություն 21-ում:

(բ) Գործարար միջավայր

Հայաստանում տեղի են ունենում քաղաքական և տնտեսական փոփոխություններ, որոնք ազդեցություն են ունեցել և կշարունակեն ազդեցություն ունենալ այս միջավայրում գործող ձեռնարկությունների գործունեության վրա: Այդ իսկ պատճառով, Հայաստանի գործարար միջավայրում ծավալված գործունեությանը հատուկ են ռիսկեր, որոնք բնորոշ չեն այլ շուկաներին: Իրավական, հարկային և օրենսդրական համակարգերը շարունակվում են զարգանալ, սակայն կարող են ունենալ տարբեր մեկնաբանություններ և ենթակա են հաճախակի փոփոխությունների, ինչը, այլ իրավական ու ֆինանսական խոչընդոտների հետ մեկտեղ, լրացուցիչ բարդություններ է ստեղծում Հայաստանում գործող կազմակերպությունների համար:

Համաշխարհային տնտեսության աճի նվազման կանխատեսումներով պայմանավորված դեռևս առկա են անորոշություններ ՀՀ հետ համագործակցող երկրների տնտեսությունների վիճակի առումով, ինչը կարող է հանգեցնել արտերկրից ոչ առևտրային դրամային փոխանցումների կրճատմանը, ինչպես նաև հանքահումքային ապրանքների միջազգային գների անկմանը, ինչից Հայաստանի տնտեսությունը գտնվում է էական կախման մեջ: Ի լրումն, կապիտալի և վարկային շուկաների ճգնաժամը և դրա ազդեցությունը Հայաստանի տնտեսության վրա ավելի են բարձրացրել տնտեսական անորոշության մակարդակը գործարար միջավայրում: Շուկայական ավելի խիստ ճնշումը կարող է հանգեցնել Հայաստանի տնտեսության, ինչպես նաև Կազմակերպության վիճակի վատթարացման: Այնուամենայնիվ, քանի դեռ այս անորոշություններում առկա դատողություններն ու ենթադրությունները շատ են, ղեկավարությունը չի կարող վստահաբար հաշվարկել, թե ինչ չափով դրանք կարող են ազդեցություն ունենալ Կազմակերպության ակտիվների և պարտավորությունների մնացորդային արժեքի վրա:

Ֆինանսական հաշվետվություններն արտացոլում են Կազմակերպության գործունեության և ֆինանսական վիճակի վրա գործարար միջավայրի ազդեցության ղեկավարության գնահատականը: Ապագա գործարար միջավայրը կարող է տարբերվել ղեկավարության գնահատականից:

2 Պատրաստման հիմունքներ

(ա) Համապատասխանության մասին հայտարարություն

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) պահանջների համաձայն:

(բ) Չափման հիմունքները

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են ամորտիզացված կամ պատմական արժեքի հիմունքով, բացառությամբ վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների, որոնք ներկայացված են իրական արժեքով:

(գ) Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթ

Կազմակերպության ֆունկցիոնալ արժույթն է ՀՀ դրամը (այսուհետև՝ դրամ), որը, լինելով Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը, արտացոլում է Կազմակերպության գործունեության հիմքում ընկած իրադարձությունների և հանգամանքների տնտեսական էությունը: Դրամը նաև սույն ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթն է:

Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս դրամը ազատ փոխարկելի արժույթ չէ: Ֆինանսական տեղեկատվությունը ներկայացված է դրամով՝ հազարների ճշտությամբ:

(դ) Վերադասակարգում

Որոշ համեմատական գումարներ վերադասակարգվել են՝ համապատասխանեցվելով ընթացիկ տարվա դասակարգումներին:

(ե) Գնահատումների և դատողությունների օգտագործում

Այս ֆինանսական հաշվետվությունները ՖՀՄՍ-ի պահանջներին համապատասխան պատրաստելու համար ղեկավարությունը կատարել է մի շարք դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ, որոնք ազդեցություն ունեն հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման, ինչպես նաև ակտիվների, պարտավորությունների, եկամտի և ծախսի ներկայացված գումարների վրա: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից:

Գնահատումները և համապատասխան ենթադրությունները շարունակաբար վերանայվում են: Հաշվապահական գնահատումների վերանայումները ճանաչվում են այն ժամանակաշրջանում՝ որում վերանայվել են և այն ապագա ժամանակշրջաններում, որոնց վրա կարող են ազդեցություն ունենալ:

Այն ենթադրությունների և գնահատումների վերաբերյալ տեղեկատվությունը, որոնք ենթադրում են հաջորդ ֆինանսական տարում էական ճշգրտման ռիսկ, ներկայացված է հետևյալ ծանոթագրություններում.

- Հաճախորդներին տրված վարկեր - ծանոթագրություն 12
- Փոխառություններ - ծանոթագրություն 14

3 Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

Ստորև ներկայացված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը հետևողականորեն կիրառվել է սույն ֆինանսական հաշվետվություններում ներկայացված բոլոր ժամանակաշրջանների համար:

(ա) Արտարժույթով գործարքներ

Արտարժույթով իրականացված գործարքները փոխարկվում են Կազմակերպության համապատասխան ֆունկցիոնալ արժույթի գործարքի օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով արտահայտված դրամային ակտիվները և պարտավորությունները վերափոխարկվում են ֆունկցիոնալ արժույթի այդ օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Դրամային միավորների գծով արտարժույթով իրականացված գործառնություններից առաջացած շահույթը կամ վնասն իրենից ներկայացնում է ժամանակաշրջանի սկզբում ֆունկցիոնալ արժույթով արտահայտված, արդյունավետ տոկոսադրույքի ու ժամանակաշրջանի վճարումների ճշգրտումով ամորտիզացված արժեքի և հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ գործող փոխարժեքով փոխարկված ֆունկցիոնալ արժույթով արտահայտված ամորտիզացված արժեքի միջև տարբերությունը: Արտարժույթով արտահայտված ոչ դրամային ակտիվները և պարտավորությունները, որոնք չափվում են իրական արժեքով, վերափոխարկվում են ֆունկցիոնալ արժույթի իրական արժեքի որոշման ամսաթվի դրությամբ սահմանված փոխարժեքով: Վերափոխարկման հետևանքով առաջացած արտարժութային տարբերությունները ճանաչվում են շահույթում կամ վնասում, բացառությամբ վաճառքի համար մատչելի բաժնային գործիքների վերափոխարկման արդյունքում առաջացած կամ դրամական միջոցների հոսքերի հեջավորման պահանջներին համապատասխանող տարբերությունների, որոնք ճանաչվում են այլ համապարփակ եկամտում: Սկզբնական արժեքով չափվող, արտարժույթով արտահայտված ոչ դրամային ակտիվները և պարտավորությունները փոխարկվում են ֆունկցիոնալ արժույթի գործարքի օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով:

(բ) Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ են համարվում կանխիկ թղթադրամները և մետաղադրամները, ՀՀ ԿԲ-ում և այլ բանկերում պահվող սահմանափակումներ չունեցող մնացորդները (նոստրո հաշիվներ): Դրամական միջոցները և դրանց համարժեքները հաշվառվում են ամորտիզացված արժեքով ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում:

(գ) Ֆինանսական գործիքներ

(i) Դասակարգում

Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքները, իրենցից ներկայացնում են ֆինանսական ակտիվներ և պարտավորություններ, որոնք.

- հիմնականում ձեռք են բերվել կամ առաջացել են մոտ ապագայում վաճառելու կամ հետ գնելու նպատակով,
- կազմում են միասին կառավարվող որոշված ֆինանսական գործիքների պորտֆելի մաս, որի համար առկա է վկայություն կարճ ժամկետում շահույթ ստանալու մոտ անցյալում տեղի ունեցած փաստացի դեպքերի վերաբերյալ,
- ածանցյալ ֆինանսական գործիք են(բացառությամբ այն ածանցյալ գործիքների, որոնք արդյունավետ հեջավորման գործիքներ են կամ նախատեսված են որպես այդպիսիք), կամ
- սկզբնական ճանաչման պահին Կազմակերպության կողմից նախատեսվում են որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ:

Կազմակերպությունը ֆինանսական ակտիվները և պարտավորությունները նախատեսում է որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ստորև ներկայացված պայմաններից մեկի բավարարման դեպքում.

- ակտիվները կամ պարտավորությունները կառավարվում և գնահատվում են իրական արժեքի հիմունքով,
- նախատեսումը վերացնում կամ էականորեն նվազեցնում է հաշվապահական անհամապատասխանությունները, որոնք կառաջանային այլ հանգամանքներում, կամ

- ակտիվը կամ պարտավորությունը ներառում է պարունակվող ածանցյալ գործիք, որը էականորեն ձևափոխում է դրամական միջոցների հոսքերը, որոնք այլապես կպահանջվեին պայմանագրի համաձայն:

Զուտ ներհոսք առաջացնող (դրական իրական արժեք) առևտրական նպատակներով պահվող բոլոր ածանցյալ գործիքները, ինչպես նաև ձեռք բերված օպցիոնները, ներկայացվում են որպես ակտիվ: Զուտ արտահոսք առաջացնող (բացասական իրական արժեք) առևտրական նպատակներով պահվող բոլոր ածանցյալ գործիքները, ինչպես նաև տրամադրված օպցիոնները, ներկայացվում են որպես պարտավորություն:

Ֆինանսական գործիքների համապատասխան դասակարգումը ղեկավարությունը որոշում է սկզբնական ճանաչման պահին: Ածանցյալ ֆինանսական գործիքները և որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ նախատեսված գործիքները սկզբնական ճանաչումից հետո չեն վերադասակարգվում շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների դասից: Ֆինանսական ակտիվը, որը համապատասխանում է վարկերի և դեբիտորական պարտքերի սահմանմանը, կարող է վերադասակարգվել շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների կամ վաճառքի համար մատչելի ֆինանսական գործիքների դասից, եթե կազմակերպությունը մտադիր է և ի վիճակի է պահել այդ գործիքները մոտ ապագայում կամ մինչև մարման ժամկետը: Այլ ֆինանսական գործիքները կարող են վերադասակարգվել շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների դասից միայն հազվագյուտ հանգամանքներում: Հազվագյուտ հանգամանքներն ի հայտ են գալիս եզակի արտասովոր դեպքի արդյունքում, երբ գրեթե անհավանական է, որ այն կրկին տեղի կունենա մոտ ապագայում:

Տրամադրված վարկերը և դեբիտորական պարտքերը ֆիքսված կամ որոշելի վճարումներով ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ են, որոնք գնանշված չեն գործող շուկայում, բացառությամբ այն գործիքների.

- որոնց Կազմակերպությունը մտադիր է անմիջապես կամ կարճ ժամկետում վաճառել,
- որոնց Կազմակերպությունը սկզբնական ճանաչման պահին նախատեսում է որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող,
- որոնց Կազմակերպությունը սկզբնական ճանաչման պահին նախատեսում է որպես վաճառքի համար մատչելի, կամ
- որոնց գծով Կազմակերպությունը չի փոխհատուցի իր բոլոր սկզբնական ներդրումները՝ վճարունակության անկարողությունից տարբեր այլ պատճառներով:

Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումները ֆիքսված կամ որոշելի վճարումներով և ֆիքսված մարման ժամկետով ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներն են, որոնք Կազմակերպությունը մտադրված է և հնարավորություն ունի պահել մինչև մարման ժամկետի լրանալը, բացառությամբ այն ներդրումների.

- որոնց սկզբնական ճանաչման պահին Կազմակերպությունը նախատեսում է որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող,
- որոնց Կազմակերպությունը նախատեսում է որպես վաճառքի համար մատչելի, կամ
- որոնք համապատասխանում են տրամադրված վարկերի ու դեբիտորական պարտքերի սահմանմանը:

Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներն իրենցից ներկայացնում են այնպիսի ֆինանսական ակտիվներ, որոնք նախատեսված են որպես վաճառքի համար մատչելի կամ դասակարգված չեն որպես տրամադրված վարկեր ու դեբիտորական պարտքեր, մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ կամ շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ:

(ii) Ճանաչում

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները ճանաչվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, երբ Կազմակերպությունը դառնում է գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվների կանոնավոր կերպով գնումները հաշվառվում են առք ու վաճառքի ամսաթվի դրությամբ:

(iii) Չափում

Ֆինանսական ակտիվի կամ պարտավորության սկզբնական ճանաչումը տեղի է ունենում իրական արժեքով: Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների խմբում չդասակարգված ֆինանսական ակտիվների և պարտավորությունների դեպքում իրական արժեքին գումարվում են գործարքի հետ կապված ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական ակտիվի կամ պարտավորության ձեռքբերմանը կամ թողարկմանը:

Սկզբնական ճանաչումից հետո ֆինանսական ակտիվները, ներառյալ ակտիվ համարվող ածանցյալ գործիքները, չափվում են իրական արժեքով՝ առանց նվազեցնելու գործարքի հետ կապված ծախսումները, որոնք կարող են առաջանալ վաճառքի կամ այլ օտարման հետ կապված, բացառությամբ՝

- վարկերի ու դեբիտորական պարտքերի, որոնք չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը,
- մինչև մարման ժամկետը պահվող ներդրումների, որոնք չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը, և
- բաժնային գործիքներում ներդրումների, որոնք գործող շուկայում չունեն գնանշված շուկայական գին, որոնց իրական արժեքները հնարավոր չէ արժանահավատորեն չափել և որոնք չափվում են սկզբնական արժեքով:

Բոլոր ֆինանսական պարտավորությունները չափվում են ամորտիզացված արժեքով, բացառությամբ այն ֆինանսական պարտավորությունների, որոնք նախատեսված են որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող և այն ֆինանսական պարտավորությունների, որոնք առաջանում են, երբ իրական արժեքով ներկայացված ֆինանսական ակտիվի փոխանցումը չի բավարարում ապաճանաչման պահանջները:

Ֆինանսական ակտիվի կամ պարտավորության ամորտիզացված արժեքն իրենից ներկայացնում է այն գումարը, որով ֆինանսական ակտիվը կամ պարտավորությունը չափվում է սկզբնական ճանաչման պահին՝ հանած մայր գումարի վճարումները, գումարած կամ հանած սկզբնապես ճանաչված գումարի և մարման պահին գումարի տարբերության կուտակված ամորտիզացիան, որը հաշվարկվել է կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը՝ հանած արժեզրկումից կորուստը: Հավելավճարները և զեղչերը, ներառյալ գործարքի հետ կապված սկզբնական ծախսումները, ընդգրկված են համապատասխան գործիքի հաշվեկշռային արժեքում և ամորտիզացվում են՝ կիրառելով գործիքի արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

(iv) Իրական արժեքի չափման սկզբունքներ

Իրական արժեք է համարվում այն գումարը, որով ակտիվը կարող է փոխանակվել կամ պարտավորությունը մարվել իրազեկ, պատրաստակամ կողմերի միջև՝ «անկախ կողմերի միջև գործարքում» չափման ամսաթվի դրությամբ:

Հնարավորության դեպքում Կազմակերպությունը գործիքի իրական արժեքը չափում է ելնելով գործող շուկայում այդ գործիքի համար գնանշումներից: Շուկան համարվում է գործող, եթե գնանշումները հեշտորեն ու կանոնավոր կերպով հասանելի են և իրենցից ներկայացնում են փաստացի և կանոնավոր կերպով շուկայում տեղի ունեցող «անկախ կողմերի միջև գործարքներ»:

Եթե ֆինանսական գործիքի շուկան գործող շուկա չէ, ապա Կազմակերպությունը որոշում է իրական արժեքը՝ օգտագործելով գնահատման տեխնիկա: Գնահատման տեխնիկաները ներառում են շուկայում վերջերս կատարված իրազեկ, պատրաստակամ «անկախ կողմերի միջև գործարքների» օգտագործումը (դրանց առկայության դեպքում), մեկ այլ՝ էականորեն չտարբերվող գործիքի ընթացիկ իրական արժեքին հղումը, զեղչված դրամական հոսքերի վերլուծությունը և օպցիոնների գնահատման մոդելները: Ընտրված գնահատման մեթոդը, որպես մուտքային տվյալներ առավելագույնս օգտագործում է շուկայական տվյալները և նվազագույնս հիմնվում է Կազմակերպության յուրահատուկ գնահատականների վրա, ներառում է բոլոր այն գործոնները, որոնք շուկայի մասնակիցները հաշվի կառնեին գինը որոշելիս, և համապատասխանում է ֆինանսական գործիքների գնահատման ընդունված տնտեսագիտական մեթոդաբանություններին: Գնահատման տեխնիկայի մուտքային տվյալները խելամտորեն ներկայացնում են շուկայի սպասումները և ֆինանսական գործիքին ներհատուկ ռիսկ-հատույց գործոնների չափումները:

Ֆինանսական գործիքի սկզբնական ճանաչման ժամանակ դրա իրական արժեքի լավագույն վկայությունը գործարքի գինն է, այսինքն՝ տրված կամ ստացված հատուցման իրական արժեքը, բացառությամբ եթե այդ գործիքի իրական արժեքի մասին վկայությունը ստացվում է նույն գործիքի գծով (այսինքն՝ առանց վերափոխման կամ «վերափաթեթավորման») այլ դիտարկելի ընթացիկ շուկայական գործարքների հետ համեմատության միջոցով, կամ գնահատման մի մոդելի հիման վրա, որի փոփոխականները ներառում են տվյալներ միայն դիտարկելի շուկաներից: Եթե գործարքի գինը տրամադրում է իրական արժեքի լավագույն վկայությունը սկզբնական ճանաչման ժամանակ, ապա ֆինանսական գործիքը սկզբնապես չափվում է գործարքի գնով, և այս գնի ու գնահատման մոդելի կիրառման արդյունքում սկզբնապես ձեռքբերված արժեքի տարբերությունը հետագայում ճանաչվում է շահույթում կամ վնասում համապատասխան հիմունքով՝ գործիքի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում, սակայն ոչ ուշ, քան գնահատման ամբողջական հիմնավորումը դիտարկելի շուկայական տվյալներով կամ գործարքի ավարտը:

Ակտիվները և երկար դիրքերը չափվում են առքի գնով, պարտավորությունները և կարճ դիրքերը չափվում են վաճառքի գնով: Երբ Կազմակերպությունն ունի միմյանց չեզոքացնող ռիսկերով դիրքեր, այն միջին շուկայական գներն օգտագործում է որպես հիմք՝ չեզոքացնող ռիսկային դիրքերը չափելու համար, և առքի կամ վաճառքի գնի գծով ճշգրտումը համապատասխանաբար կիրառում է միայն զուտ բաց դիրքի նկատմամբ: Իրական արժեքն արտացոլում է գործիքի վարկային ռիսկը և ներառում են ճշգրտումներ Կազմակերպության ու գործարքի կողմի վարկային ռիսկը հաշվի առնելու համար՝ անհրաժեշտության դեպքում: Մոդելների օգտագործման արդյունքում ստացված իրական արժեքի գնահատականները ճշգրտվում են ցանկացած այլ գործոնների հետ կապված՝ այդ թվում իրացվելիության ռիսկի կամ մոդելի անորոշության հետ կապված, այնքանով, որքանով Կազմակերպությունը գտնում է, որ երրորդ անձ հանդիսացող շուկայի մասնակիցը կարող է դրանք հաշվի առնել գործարքի գինը որոշելիս:

(v) Հետագա չափման հետևանքով առաջացած շահույթ և վնաս

Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքի փոփոխությունից առաջացած շահույթը կամ վնասը ճանաչվում է հետևյալ կերպ.

- շահույթում կամ վնասում ճանաչվում է այն ֆինանսական գործիքի գծով շահույթը կամ վնասը, որը դասակարգված է որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող,
- վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների գծով շահույթը կամ վնասը ճանաչվում է սեփական կապիտալում՝ որպես այլ համապարփակ եկամուտ (բացառությամբ արժեզրկումից կորուստների և վաճառքի համար մատչելի պարտքային ֆինանսական գործիքների գծով փոխարժեքային տարբերություններից առաջացած շահույթի և վնասի), մինչև որ նշված ակտիվն ապաճանաչվում է և այդ պահին կուտակված շահույթը կամ վնասը, որը նախկինում ճանաչվել էր սեփական կապիտալում, ճանաչվում է շահույթում կամ վնասում: Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվի գծով տոկոսները ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ վաստակելու ժամանակ և հաշվարկվում են կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների և պարտավորությունների գծով շահույթը կամ վնասը ճանաչվում է շահույթում կամ վնասում, երբ ֆինանսական ակտիվը կամ պարտավորությունն ապաճանաչվում է կամ արժեզրկվում է, ինչպես նաև ամորտիզացիայի հաշվարկի ընթացքում:

(vi) Ապաճանաչում

Կազմակերպությունն ապաճանաչում է ֆինանսական ակտիվն այն դեպքում, երբ ֆինանսական ակտիվից առաջացող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցնում են իրենց ուժը, կամ երբ փոխանցում է ֆինանսական ակտիվն այնպիսի գործարքում, որում փոխանցվում են ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված ըստ էության բոլոր ռիսկերն ու հատույցները, կամ որում Կազմակերպությունը ոչ պահպանում, ոչ էլ փոխանցում է սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները և չի պահպանում ֆինանսական ակտիվի նկատմամբ վերահսկողությունը: Ապաճանաչման պայմանները բավարարող փոխանցված ֆինանսական ակտիվի գծով տոկոսները, որոնք առաջացել կամ պահպանվել են Կազմակերպության կողմից ճանաչվում են որպես առանձին ակտիվ կամ պարտավորություն ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում: Կազմակերպությունն ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունը, երբ պայմանագրային պարտականությունները կատարվում են, կամ չեղյալ են համարվում, կամ ուժը կորցնում են:

Կազմակերպությունը կատարում գործարքներ է, որոնցով փոխանցում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված ակտիվները, սակայն պահպանում է փոխանցված ակտիվների սեփականության հետ կապված բոլոր ռիսկերն ու հատույցները կամ դրանց մի մասը: Եթե ակտիվի սեփականության հետ կապված բոլոր կամ, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները պահպանվում են, ապա փոխանցված ակտիվները չեն ապաճանաչվում:

Գործարքներում, որոնցում Կազմակերպությունը ոչ փոխանցում է, ոչ էլ պահպանում է ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները, այն ապաճանաչում է ակտիվը, եթե կորցնում է դրա նկատմամբ վերահսկողությունը:

Փոխանցումների այն գործարքներում, որոնցում Կազմակերպությունը պահպանում է ակտիվի նկատմամբ վերահսկողությունը, Կազմակերպությունը շարունակում է ճանաչել ֆինանսական ակտիվը այնքանով, որքանով շարունակվում է իր ներգրավվածությունը ֆինանսական ակտիվի մեջ, որն այն չափն է, որով նա ենթարկված է փոխանցված ակտիվի արժեքի փոփոխությունների ազդեցությանը:

Կազմակերպությունը դուրս է գրում անհավաքագրելի համարվող ակտիվները:

(viii) Հետգնման պայմանագրեր

Վաճառքի և հետգնման պայմանագրերով («ռեպո») վաճառված արժեթղթերը հաշվառվում են որպես գրավով ապահովված ֆինանսավորման գործարքներ, որի դեպքում արժեթղթերն արտացոլվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, իսկ պայմանագրային կողմի պարտավորությունը ներառվում է ռեպո գործարքների գծով վճարվելիք գումարների կազմում՝ վարկեր և փոխառություններ հոդվածում: Վաճառքի և հետգնման գների տարբերությունը դիտվում է որպես տոկոսային ծախս և ճանաչվում է շահույթում կամ վնասում ռեպո պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

(ix)Հաշվանցում

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում արտացոլվելով զուտ գումարով, եթե գոյություն ունի ճանաչված գումարները հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք, ինչպես նաև հաշվարկը զուտ հիմունքով իրականացնելու կամ միաժամանակ ակտիվն իրացնելու և պարտավորությունը մարելու մտադրություն:

(դ) Հիմնական միջոցներ

(i) Սեփական ակտիվներ

Հիմնական միջոցների միավորները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները:

Երբ հիմնական միջոցի միավորը բաղկացած է օգտակար ծառայության տարբեր ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, այդ բաղկացուցիչները հաշվառվում են որպես հիմնական միջոցների առանձին միավորներ:

(ii) Մաշվածություն

Մաշվածությունը ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետի ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է հիմնական միջոցի ձեռքբերման պահից, իսկ սեփական ուժերով կառուցված ակտիվների դեպքում՝ վերջիններս կառուցումն ավարտելու և շահագործման հանձնելու պահից: Օգտակար ծառայության գնահատված ժամկետները հետևյալն են.

փոխադրամիջոցներ	5 տարի
գույք և գրասենյակային սարքավորումներ	1-5 տարի
այլ հիմնական միջոցներ	1-5 տարի
կապի և հաղորդակցության միջոցներ	
գործառնական վարձակալության ենթակա հիմնական միջոցներ	1 տարի
	5 տարի

Վարձակալված հիմնական միջոցների համար կատարած բարելավումների գծով մաշվածությունը հաշվարկվում է ակտիվի օգտակար ծառայության ժամկետից և վարձակալության գործողության ժամկետից նվազագույնի ընթացքում:

(ե) Ոչ նյութական ակտիվներ

Կազմակերպության կողմից ձեռք բերված ոչ նյութական ակտիվները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները:

Համակարգչային ծրագրերի լիցենզիաների ձեռքբերման ծախսերը կապիտալացվում են որպես առանձին ծրագրի ձեռքբերման և ներդրման ծախսեր:

Ամորտիզացիան ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ կիրառելով գծային մեթոդը ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայության ժամկետի ընթացքում: Ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայության գնահատված ժամկետը կազմում է 10 տարի:

(զ) Արժեզրկում

(i) Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվները հիմնականում ներառում են վարկերը և այլ դեբիտորական պարտքերը («վարկեր և դեբիտորական պարտքեր»): Կազմակերպությունը վերանայում է իր վարկերը և դեբիտորական պարտքերը՝ արժեզրկումը կանոնավոր հիմունքով գնահատելու նպատակով: Վարկը կամ դեբիտորական պարտքը արժեզրկվում է, և արժեզրկումից կորուստներ ճանաչվում են այն և միայն այն դեպքում, երբ առկա է անկողմնակալ վկայություն սկզբնական ճանաչումից հետո տեղի ունեցած մեկ կամ ավելի դեպքերի արդյունք հանդիսացող արժեզրկման մասին, և այդ դեպքը (կամ դեպքերը) ազդեցություն ունի

վարկի գծով դրամական միջոցների գնահատված ապագա հոսքերի վրա, որոնք հնարավոր է արժանահավատորեն գնահատել:

Ֆինանսական ակտիվների արժեզրկման անկողմնակալ վկայությունը կարող է ներառել պարտավորությունների չկատարումը կամ վճարումների հետաձգումը վարկառուի կողմից, վարկային պայմանագրի պայմանների խախտումները վարկառուի կողմից, վարկի կամ փոխառության պայմանների այնպիսի վերանայումը, որը Կազմակերպությունն այլ հանգամանքներում չէր դիտարկի, վարկառուի կամ թողարկողի սնանկացման հայտանիշները, արժեթղթի համար գործող շուկայի վերացումը, գրավի արժեքի նվազումը կամ ակտիվների խմբին վերաբերող այլ դիտարկելի տվյալները, ինչպիսիք են խմբի կազմի մեջ մտնող վարկառուների վճարունակության վատթարացումը, կամ տվյալ խմբի կազմի մեջ մտնող վարկառուների կողմից պարտականությունների չկատարման հետ փոխկապակցված տնտեսական պայմանների փոփոխությունը:

Կազմակերպությունը նախ գնահատում է, թե արդյոք գոյություն ունի արժեզրկման անկողմնակալ վկայություն այն առանձին վարկերի ու դեբիտորական պարտքերի գծով, որոնք առանձին վերցված նշանակալի են, և ապա առանձին կամ հավաքական հիմունքով՝ այն վարկերի ու դեբիտորական պարտքերի գծով, որոնք առանձին վերցված նշանակալի չեն: Եթե Կազմակերպությունը որոշում է, որ առանձին գնահատված վարկի կամ դեբիտորական պարտքի գծով՝ լինի այն նշանակալի կամ ոչ նշանակալի, արժեզրկման անկողմնակալ վկայություն չկա, ապա այն ներառում է այդ վարկը պարտքային ռիսկի համանման բնութագրերով վարկերի և դեբիտորական պարտքերի խմբում և դրանք հավաքական հիմունքով գնահատում արժեզրկման տեսանկյունից: Այն վարկերը և դեբիտորական պարտքերը, որոնք առանձին են գնահատվում արժեզրկման տեսանկյունից, և որոնց գծով արժեզրկումից կորուստը ճանաչվում կամ շարունակվում է ճանաչվել, չեն ներառվում արժեզրկման հավաքական հիմունքով գնահատման մեջ:

Եթե առկա է վարկի կամ դեբիտորական պարտքի գծով արժեզրկումից կորստի անկողմնակալ վկայություն, ապա կորստի գումարը չափվում է որպես վարկի կամ դեբիտորական պարտքի հաշվեկշռային արժեքի և այդ վարկի կամ դեբիտորական պարտքի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով զեղչված դրամական միջոցների ակնկալվող ապագա հոսքերի, ներառյալ երաշխիքների գծով ստացվելիք գումարների և գրավի ներկա արժեքի միջև տարբերությունը: Պայմանագրով նախատեսված դրամական միջոցների հոսքերը և նախկին փորձի վրա հիմնված վնասները, որոնց գծով ներկա տնտեսական պայմաններն արտացոլող առկա տեղեկատվության հիման վրա կատարվել են ճշգրտումներ, հանդիսանում են դրամական միջոցների ակնկալվող հոսքերի գնահատման հիմք:

Որոշ դեպքերում դիտարկելի տվյալները, որոնք պահանջվում են՝ վարկի կամ դեբիտորական պարտքի գծով՝ արժեզրկումից կորստի չափը գնահատելու համար, կարող են լինել սահմանափակ կամ այլևս ոչ ամբողջությամբ առնչվող տվյալ հանգամանքներին: Դա կարող է տեղի ունենալ, երբ փոխառուն ֆինանսական դժվարությունների մեջ է, և համանման փոխառուների վերաբերյալ քիչ պատմական տվյալներ կան: Այդպիսի դեպքերում, ցանկացած արժեզրկումից կորստի չափը գնահատելու համար Կազմակերպությունն օգտագործում է փորձի վրա հիմնված իր դատողությունը:

Վարկերի և դեբիտորական պարտքերի գծով արժեզրկումից կորուստները ճանաչվում են շահույթում կամ վնասում և հակադարձվում են այնքանով, որքանով փոխհատուցվող գումարի հետագա աճը կարելի է անկողմնակալորեն կապել արժեզրկումից կորստի ճանաչումից հետո տեղի ունեցած իրադարձությանը:

Այն դեպքերում, երբ վարկի հավաքագրումը հնարավոր չէ, վարկը դուրս է գրվում ի հաշիվ արժեզրկման գծով ձևավորված համապատասխան պահուստի: Կազմակերպությունը վարկի մնացորդը (և արժեզրկման գծով ձևավորված ցանկացած պահուստները) դուրս է գրում, երբ ղեկավարությունը որոշում է, որ վարկն ենթակա չէ հավաքագրման և ձեռնարկվել են վարկի վերադարձի հետ կապված բոլոր անհրաժեշտ քայլերը:

(ii) Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ

Վաճառքի համար մատչելի ակտիվների գծով արժեզրկումից կորուստները ճանաչվում են այլ համապարփակ եկամտում ճանաչված կուտակված վնասը փոխանցելով շահույթի կամ վնասի կազմ՝ որպես վերադասակարգման ճշգրտում: Կուտակված վնասը, որը այլ համապարփակ եկամտից վերադասակարգվում է շահույթի կամ վնասի կազմ, հանդիսանում է ձեռքբերման արժեքի՝ հանած մայր գումարի մարումները ու մաշվածությունը, և ընթացիկ իրական արժեքի՝ հանած նախկինում շահույթի կամ վնասի կազմում ճանաչված արժեզրկումից կորուստները, միջև տարբերությունը: Ժամանակի արժեքին վերագրելի արժեզրկման գծով պահուստի փոփոխությունները արտացոլվում են որպես տոկոսային եկամտի բաղադրիչ:

Վաճառքի համար մատչելի բաժնային արժեթղթում կատարած ներդրման իրական արժեքի էական կամ երկարատև նվազումը դրա սկզբնական արժեքից հանդիսանում է արժեզրկման անկողմնակալ վկայություն:

Եթե հետագա ժամանակաշրջանում արժեզրկված վաճառքի համար մատչելի պարտքային արժեթղթի իրական արժեքն աճում է, և այդ աճը հնարավոր է անկողմնակալորեն կապել շահույթի կամ վնասի կազմում արժեզրկումից կորստի ճանաչումից հետո տեղի ունեցած իրադարձությանը, ապա արժեզրկումից կորուստը հակադարձվում է, իսկ հակադարձված գումարը ճանաչվում է շահույթում կամ վնասում: Այնուհանդերձ, արժեզրկված վաճառքի համար մատչելի պարտքային արժեթղթի իրական արժեքի ցանկացած հետագա վերականգնումը ճանաչվում է այլ համապարփակ եկամտում:

(iii) Ոչ ֆինանսական ակտիվներ

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ այլ ոչ ֆինանսական ակտիվները, բացառությամբ հետաձգված հարկերի, գնահատվում են արժեզրկման հայտանիշ բացահայտելու նպատակով: Ոչ ֆինանսական ակտիվների փոխհատուցվող գումարը որոշվում է որպես նրանց իրական արժեքից (հանած վաճառքի ծախսերը) և օգտագործման արժեքից առավելագույնը: Օգտագործման արժեքը գնահատելիս դրամական միջոցների գնահատված ապագա հոսքերը զեղչվում են իրենց ներկա արժեքով՝ օգտագործելով մինչև հարկումը զեղչման այն դրույքը, որն արտացոլում է ժամանակի մեջ դրամի արժեքի շուկայի ներկա գնահատականը և ակտիվին բնորոշ ռիսկերը: Այլ ակտիվներից առաջացող դրամական միջոցների ներհոսքից մեծապես անկախ և դրամական միջոցների ներհոսք չառաջացնող ակտիվների փոխհատուցվող գումարը որոշվում է այն դրամաստեղծ միավորի համար, որին պատկանում է տվյալ ակտիվը: Արժեզրկումից կորուստը ճանաչվում է, երբ ակտիվի կամ նրա դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը գերազանցում է նրա փոխհատուցվող գումարը:

Ոչ ֆինանսական ակտիվների գծով արժեզրկումից կորուստը ճանաչվում է շահույթում կամ վնասում և հակադարձվում է միայն այն դեպքում, եթե փոխվել են փոխհատուցվող գումարը որոշելու համար օգտագործվող գնահատումները: Արժեզրկումից կորուստը հակադարձվում է միայն այն չափով, որ ակտիվի հաշվեկշռային արժեքը չգերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլիներ՝ առանց համապատասխան մաշվածության և ամորտիզացիայի, եթե արժեզրկումից կորուստ ճանաչված չլիներ:

(զ) Պահուստներ

Պահուստը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչվում է, երբ Կազմակերպությունը, որպես անցյալ դեպքերի արդյունք ունի իրավական կամ կառուցողական պարտականություն, և հավանական է, որ այդ պարտականությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտների արտահոսք: Եթե ազդեցությունն էական է, պահուստները որոշվում են զեղչելով ակնկալվող դրամական հոսքերը՝ օգտագործելով զեղչման մինչև հարկումը գործող այն դրույքը, որն արտացոլում է ժամանակի մեջ դրամի արժեքի շուկայի ներկա գնահատականը և, անհրաժեշտության դեպքում՝ պարտավորությանը բնորոշ ռիսկերը:

(է) Փոխառությունների գծով պարտավորվածություններ

Բնականոն գործունեության ընթացքում Վարկային կազմակերպությունը հանձն է առնում փոխառությունների գծով պարտավորվածություններ, որոնք ներառում են չօգտագործված վարկային պարտավորվածությունները և երաշխիքները:

Ֆինանսական երաշխիքներն իրենցից ներկայացնում են պայմանագրեր, որոնք պարտավորեցնում են Կազմակերպությանը կատարել որոշակի վճարումներ, որոնք կփոխհատուցեն երաշխիքի սեփականատիրոջ այն վնասները, որոնք նա կկրեր, եթե առանձին պարտատերն ի վիճակի չլիներ կատարել վճարումները պարտքային գործիքի պայմաններով նախատեսված ժամկետներում:

Ֆինանսական երաշխիքի գծով պարտավորությունն ի սկզբանե ճանաչվում է իրական արժեքով, հաշվի չառնելով գործարքի հետ կապված ծախսումները, և հետագայում չափվում է երկու մեծություններից առավելագույնով՝ ի սկզբանե ճանաչված գումարը՝ հանած կուտակված ամորտիզացիան կամ երաշխիքի գծով կորուստների պահուստը: Ֆինանսական երաշխիքների գծով կորուստների պահուստը և փոխառությունների գծով այլ պարտավորվածությունները ճանաչվում են, երբ գոյություն ունի վնաս կրելու հավանականություն և այդ վնասը հնարավոր է արժանահավատորեն չափել:

Ֆինանսական երաշխիքի գծով պարտավորությունները և փոխառությունների գծով այլ պարտավորվածությունների գծով պահուստները ներառվում են այլ պարտավորությունների կազմում:

Փոխառությունների գծով պարտավորվածությունները չեն ճանաչվում, բացառությամբ հետևյալ պարտավորվածությունների.

- փոխառությունների գծով պարտավորվածություններ, որոնք Կազմակերպությունը նախատեսում է որպես ֆինանսական պարտավորություններ իրական արժեքով չափվող՝ շահույթի կամ վնասի միջոցով
- եթե Կազմակերպությունն ունի իր փոխառությունների գծով պարտավորվածություններից առաջացող ակտիվների՝ դրանց առաջացումից կարճ ժամանակ անց վաճառելու նախկին պրակտիկա, ապա նույն դասում գտնվող բոլոր փոխառությունների գծով պարտավորվածությունները դիտվում են որպես ածանցյալ գործիքներ
- փոխառությունների գծով պարտավորվածություններ, որոնք կարող են մարվել զուտ հիմունքով՝ դրամական միջոցներով կամ մեկ այլ ֆինանսական գործիք մատակարարելով կամ թողարկելով
- շուկայականից ցածր տոկոսադրույքով փոխառություն տրամադրելու պարտավորվածություններ:

(ը) Բաժնետիրական կապիտալ

Սովորական բաժնետոմսերը դասակարգվում են որպես սեփական կապիտալ: Սովորական բաժնետոմսերին ուղղակիորեն վերագրելի լրացուցիչ ծախսերը ճանաչվում են որպես սեփական կապիտալի նվազեցում՝ առանց հարկային հետևանքների:

(ii) Շահաբաժիններ

Շահաբաժիններ հայտարարելու և վճարելու Կազմակերպության կարողությունը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կանոնակարգերով:
Սովորական բաժնետոմսերի շահաբաժիններն արտացոլվում են որպես չբաշխված շահույթի բաշխում այն ժամանակահատվածում, երբ հայտարարվում են:

(թ) Հարկում

Շահութահարկը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից: Շահութահարկը ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ այն մասի, որը վերաբերում է այլ համապարփակ եկամտի միավորներին կամ ուղղակիորեն սեփական կապիտալում ճանաչված բաժնետերերի հետ

իրականացված գործառնություններին, որի դեպքում շահութահարկը ճանաչվում է այլ համապարփակ եկամտում կամ ուղղակիորեն սեփական կապիտալում:
Ընթացիկ հարկը տարվա շահութահարկի գծով ակնկալվող վճարման ենթակա հարկի գումարն է, որը հաշվարկվում է՝ կիրառելով հարկերի այն դրույքները, որոնք ուժի մեջ են եղել կամ, ըստ էության, ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ, և նախորդ տարիների վճարման ենթակա հարկերի գծով կատարված ճշգրտումները:
Հետաձգված հարկերը հաշվարկվում են օգտագործելով հաշվեկշռային պարտավորության մեթոդը՝ հիմնվելով ֆինանսական հաշվետվությունների պատրաստման նպատակներով օգտագործվող ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների ու հարկային նպատակներով օգտագործվող գումարների ժամանակավոր տարբերությունների վրա: Հետաձգված հարկի գումարը հիմնված է ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքի իրացման կամ մարման ակնկալվող մեթոդի վրա՝ կիրառելով հարկերի այն դրույքները, որոնք ուժի մեջ են եղել կամ, ըստ էության, ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ:
Հետաձգված հարկը ճանաչվում է ֆինանսական հաշվետվությունների նպատակների համար օգտագործվող ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և հարկային նպատակների համար օգտագործվող գումարների ժամանակավոր տարբերությունների գծով: Հետաձգված հարկը չի ճանաչվում հետևյալ ժամանակավոր տարբերությունների համար՝ հարկային նպատակներով չնվազեցվող գուդվիլ, ակտիվների կամ պարտավորությունների սկզբնական ճանաչում, որը ազդեցություն չունի հաշվապահական կամ հարկվող շահույթի վրա, ինչպես նաև այն դուստր ընկերություններում կատարած ներդրումներին վերաբերող ժամանակավոր տարբերություններ, որտեղ մայր ընկերությունն ի վիճակի է վերահսկել ժամանակավոր տարբերության հակադարձումը և հավանական է, որ ժամանակավոր տարբերությունը չի հակադարձվի մոտ ապագայում: Հետաձգված հարկի գումարը չափվում է՝ կիրառելով հարկերի այն դրույքները, որոնք ակնկալվում է, որ կկիրառվեն ժամանակավոր տարբերությունների նկատմամբ վերջիններս հակադարձելիս՝ հիմք ընդունելով այն օրենքների դրույթները, որոնք ուժի մեջ են եղել կամ, ըստ էության, ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ:

Հետաձգված հարկային ակտիվը ճանաչվում է միայն այն չափով, որքանով հավանական է, որ առկա կլինի ապագա հարկվող շահույթ, որի դիմաց կարող են օգտագործվել ժամանակավոր տարբերությունները, չօգտագործված հարկային վնասները և արտոնությունները: Հետաձգված հարկային ակտիվները նվազեցվում են այնքանով, որքանով հավանական չէ, որ համապատասխան հարկային օգուտը կիրացվի:

(ժ) Եկամտի և ծախսի ճանաչում

Տոկոսային եկամուտը և ծախսը ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:
Վարկերի տրամադրման, սպասարկման և այլ վճարները, որոնք գործարքի հետ կապված ծախսերի հետ միասին դիտարկվում են որպես վարկի ընդհանուր շահութաբերության անբաժան մաս, հետաձգվում են և ամորտիզացվում են տոկոսային եկամտի կազմում ֆինանսական գործիքի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:
Այլ վճարները, միջնորդավճարների գծով եկամուտը և ծախսը ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ համապատասխան ծառայությունը տրամադրելիս:
Գործառնական վարձակալության գծով վճարները ճանաչվում են շահույթում կամ վնասում գծային մեթոդով՝ վարձակալության գործողության ժամկետի ընթացքում:

(ի) Դեռևս չընդունված նոր ստանդարտներ և մեկնաբանություններ

Մի շարք նոր ստանդարտներ, ստանդարտների փոփոխություններ և մեկնաբանություններ չէին գործում 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և չեն կիրառվել սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս: Այդ ստանդարտներից և փոփոխություններից ստորև ներկայացվածները հնարավոր է, որ ազդեցություն կունենան Կազմակերպության ֆինանսական վիճակի և գործունեության վրա: Կազմակերպությունը մտադիր է կիրառել այդ ստանդարտները, երբ վերջիններս մտնեն ուժի մեջ:

- ՖՀՄՍ 9. Ֆինանսական գործիքներ, հրապարակված 2014թ-ի հուլիսին, փոխարինում է գոյություն ունեցող ՀՀՄՍ 39 Ֆինանսական գործիքներ. Ճանաչում և չափում ուղեցույցին: ՖՀՄՍ 9 ներառում է նշված ուղեցույցը ֆինանսական գործիքների դասակարգման և չափման, ներառելով նոր ենթադրվող վարկունակության վնասի մոդելը՝ ֆինանսական ակտիվների անվճարունակության հաշվարկի համար և հեջավորման հաշվառման նոր պահանջները: Այն նաև առաջ է քաշում ՀՀՄՍ 39-ի ֆինանսական գործիքների ճանաչման և չճանաչման ուղղուցյցը: ՖՀՄՍ 9-ը արդյունավետ է 2018թ.-ի հունվարի 1-ից հետո հաշվետու ժամանակաշրջանների համար և ռետրոսպեկտիվ կերպով կկիրառվի որոշ արտոնություններով: Ստանդարտի ավելի շուտ կիրառումն արգելվում է: Չի նախատեսում այս ստանդարտի ավելի վաղ ընդունում: Կազմակերպությունը գնահատում է ՖՀՄՍ 9-ի կիրառման պոտենցիալ ազդեցությունը իր ֆինանսական հաշվետվությունների վրա:
- ՖՀՄՍ 15. Հաճախորդների հետ գործարքներից հասույթ, տալիս է հիմնական սահմանումը, թե որքանով և ինչ մակարդակով է հասույթը ճանաչվում: Այն փոխարինում է ՀՀՄՍ 18 Հասույթ, ՀՀՄՍ 11 Կառուցման պայմանագրեր, ՖՀՄՄԿ 13 Հաճախորդի հավատարմության ծրագրերում ներառվող հասույթի ճանաչման ուղեցույցին: Նոր ստանդարտի հիմնական սկզբունքը կայանում է նրանում, որ հիմնադրամը հասույթը ճանաչում է նկարագրելու խոստացված ապրանքների և ծառայությունների փոխանցումը հաճախորդներին այն գումարը, որն արտացոլված է համաձայնագրում, որով Հիմնադրամը նախատեսում է ստանալ ապրանքների և ծառայությունների փոխանակման իրավունք: Նոր ստանդարտը հանգեցնում է հասույթի մասին ընդլայված բացահայտումների, ապահովում է նախկինում ամբողջապես և հասկանալի չհասցեագրված գործարքների կառավարում և բարելավում է բազմատարր համաձայնագրերի կառավարումը: ՖՀՄՍ 15-ը արդյունավետ է 2018թ.-ի հունվարի 1-ից հետո տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար՝ արգելելով նախապես ընդունումը: Ստանդարտի ավելի վաղ կիրառումն արգելվում է: Կազմակերպություն չի նախատեսում այս ստանդարտի ավելի վաղ ընդունում: Կազմակերպությունը գնահատում է ՖՀՄՍ 15-ի կիրառման պոտենցիալ ազդեցությունը իր ֆինանսական հաշվետվությունների վրա: ՖՀՄՍ 16. Վարձակալություն. Փոխարինում է ՀՀՄՍ 17 Վարձակալություն, ՖՀՄՄԿ 4 Համաձայնություններում վարձակալության առկայության որոշում, ՍՄԿ 15 Գործառնական վարձակալություն. խրախուսող պայմաններում առկա վարձակալության հաշվառման ուղեցույցին: Այն բացառում է վարձակալի մոտ ներկայիս կրկնակի հաշվառման մոդելը, որն առանձնացնում է հաշվեկշռային ֆինանսական վարձակալությունը արտահաշվեկշռային գործառնական վարձակալությունից: Դրա փոխարեն կա միայն հաշվեկշռային հաշվառման մոդել, որը համարժեք է ներկայիս ֆինանսական լիզինգի հաշվառմանը: Վարձատուի մոտ հաշվառումը իրականացվում է նույն կերպ, ինչ նախկինում, այսինքն՝ վարձատուները շարունակում են դասակարգել վարձակալությունը ֆինանսական և գործառնական վարձակալությունների: ՖՀՄՍ 15-ը արդյունավետ է 2019թ.-ի հունվարի 1-ից հետո տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար՝ արգելելով նախապես ընդունումը, եթե ՖՀՄՍ 15. Հաճախորդների հետ գործարքներից հասույթը նույնպես ընդունվել է: Կազմակերպությունը չի նախատեսում այս ստանդարտի ավելի վաղ ընդունում: Կազմակերպությունը գնահատում է ՖՀՄՍ 16-ի կիրառման պոտենցիալ ազդեցությունը իր ֆինանսական հաշվետվությունների վրա:
- Բազմաթիվ *«ՖՀՄՍ-ների կատարելագործումները»* դիտարկվել են առանձին՝ ըստ յուրաքանչյուր ստանդարտի: Բոլոր փոփոխությունները, որոնք հանգեցնում են ներկայացման, ճանաչման կամ չափման հաշվառման փոփոխություններին, կգործեն 2018թ. հունվարի 1-ից և հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար: Ընկերությունը դեռ չի վերլուծել այս բարելավումների ազդեցությունն իր ֆինանսական վիճակի կամ գործունեության վրա:

4 Զուտ տոկոսային եկամուտ

հազար դրամ	2017թ.	2016թ.
Տոկոսային եկամուտ		
Հաճախորդներին տրված վարկեր	1,043,525	1,096,616
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ	165,465	162,556
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	1,043	1,674
Ժամկետային ավանդներ բ անկերում	345,765	274,999
	1,555,798	**1,535,845**
Տոկոսային ծախս		
Վարկեր և փոխառություններ	543,929	545,066
Ռեպո համաձայնագրեր	88,936	106,979
	632,865	**652,045**
Զուտ տոկոսային եկամուտ	**922,933**	**883,800**

5 Միջնորդավճարների գծով եկամուտ

հազար դրամ	2017թ.	2016թ.
Վարկավորման գործառնություններ	6,525	700
	6,525	**700**

6 Աշխատակազմի գծով ծախսեր

հազար դրամ	2017թ.	2016թ.
Աշխատակիցների փոխհատուցումներ և դրան վերաբերող հարկեր	261,553	339, 349
	261,553	**339, 349**

7 Այլ ընդհանուր վարչական ծախսեր

հազար դրամ	2017թ.	2016թ.
Գործառնական վարձակալության գծով ծախս	23,910	7,920
Չփոխհատուցվող հարկեր և տուրքեր	9,097	9,369
Մասնագիտական ծառայություններ	8,133	6,533
Մաշվածություն և ամորտիզացիա	5,871	8,069
Կապի և տեղեկատվական ծառայություններ	3,227	3,109
Գրասենյակային ծախսեր	1,772	2,853
Անվտանգության ծառայություն	12	3,613
Այլ	14,525	10,696
	66,547	**52,162**

8 Շահութահարկի գծով ծախս

հազար դրամ	2017թ.	2016թ.
Ընթացիկ հարկի գծով ծախս		
Ընթացիկ տարի	123,453	103,261
Հետաձգված հարկի գծով ծախս	**123,453**	**103,261**
Ժամանակավոր տարբերությունների առաջացում և հակադարձում	(1,080)	(3,831)
Այլ	-	-
Ընդամենը շահութահարկի գծով ծախս	**122,373**	**99,430**

2017թ-ին ընթացիկ և հետաձգված հարկերի գծով կիրառելի հարկային դրույքը կազմում է 20% (2016թ-ին՝ 20%):

Արդյունավետ հարկային դրույքի համադրում

	2017թ. հազար դրամ	%	2016թ. հազար դրամ	%
Շահույթ մինչև հարկումը	**623,819**		**484,833**	
Շահութահարկ՝ կիրառելի հարկային դրույքով	124,764	20	96,967	20
Չնվազեցվող ծախսեր	(2,391)	(0.4)	2,463	1
	122,373	**20**	**99,430**	**21**

(ա) Հետաձգված հարկային ակտիվներ և պարտավորություններ

Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման նպատակներով օգտագործվող ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և հարկային նպատակներով օգտագործվող գումարների միջև ժամանակավոր տարբերություններն առաջացնում են զուտ հետաձգված հարկային պարտավորություններ 2017թ. և 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

Ստորև ներկայացված է ժամանակավոր տարբերությունների շարժը 2017թ. և 2016թ. ընթացքում:

հազար դրամ	Մնացորդը առ 1 հունվարի 2016թ.	Շահույթում կամ վնասում ճանաչված	Այլ համապարփակ եկամտում ճանաչված	Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2016թ.
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ	(4,438)	-	(36,696)	(41,134)
Այլ պարտավորություններ	7,285	3,831	-	11,116
	2,847	**3,831**	**(36,696)**	**(30,018)**

հազար դրամ	Մնացորդը առ 1 հունվարի 2017թ.	Շահույթում կամ վնասում ճանաչված	Այլ համապարփակ եկամտում ճանաչված	Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2017թ.
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ	(41,134)	-	(17,562)	(58,696)
Այլ պարտավորություններ	11,116	1,080	-	12,196
	(30,018)	**1,080**	**(17,562)**	**(46,500)**

(բ) Այլ համապարփակ եկամտում ճանաչված շահութահարկ

Ստորև ներկայացված են այլ համապարփակ եկամտի տարրերին վերաբերող հարկային հետևանքները դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար:

	2017թ.			2016թ.		
հազար դրամ	**Գումարը մինչև հարկումը**	**Հարկի գծով հատուցում**	**Գումարը հարկումից հետո**	**Գումարը մինչև հարկումը**	**Հարկի գծով ծախս**	**Գումարը հարկումից հետո**
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների իրական արժեքի զուտ փոփոխություն	275,918	(58,696)	217,222	205,670	(41,134)	164,536
Այլ համապարփակ եկամուտ	**275,918**	**(58,696)**	**217,222**	**205,670**	**(41,134)**	**164,536**

9 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

հազար դրամ	**2017թ.**	**2016թ.**
Կանխիկ	12,579	10,207
Ընթացիկ հաշիվներ		
10 խոշորագույն հայկական բանկեր	26,388	4,991
Փոքր և միջին չափի հայկական բանկեր	31,409	18
Ընդամենը ընթացիկ հաշիվներ	**57,797**	**5,009**
Ընդամենը դրամական միջոցներ և դրանց համարժեքներ, ինչպես ներկայացված է դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունում	**70,376**	**15,216**
Հաշվեգրված տոկոսներ	3	161
Ընդամենը դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	**70,379**	**15,377**

Դրամական միջոցները և դրանց համարժեքները արժեզրկված կամ ժամկետանց չեն:

10 Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ

հազար դրամ	**2017թ.**	**2016թ.**
Պարտքային և ֆիքսված եկամտով գործիքներ		
ՀՀ պետական գանձապետական պարտատոմսեր	1,401,717	1,311,994
	1,401,717	**1,311,994**

Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվները ժամկետանց կամ արժեզրկված չեն:

11 Ժամկետային ավանդներ բանկերում

հազար դրամ	2017թ.	2016թ.
10 խոշորագույն հայկական բանկեր	2,651,578	1,932,531
Փոքր և միջին չափի հայկական բանկեր	-	18
Ընդամենը ժամկետային ավանդներ բանկերում	**2,651,578**	**1,932,549**

Բանկերում ժամկետային ավանդների կենտրոնացում

2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Կազմակերպության բանկային հաշիվների մնացորդներ, գերազանցում են Կազմակերպության սեփական կապիտալի 10%-ը (2016թ. դեկտեմբերի 31-ին նույնպես բանկի հաշիվների մնացորդը գերազանցում էր Կազմակերպության սեպական կապիտալի 10%-ը):

12 Հաճախորդներին տրված վարկեր

հազար դրամ	2017թ.	2016թ.
Իրավաբանական անձանց տրված վարկեր		
Վարկեր խոշոր ընկերություններին	1,888,769	2,322,035
Վարկեր ԼՂՀ պետական մարմիններին	1,795,331	1,669,282
Վարկեր փոքր և միջին չափի ընկերություններին	71,363	39,149
Ընդամենը իրավաբանական անձանց տրված վարկեր	**3,755,462**	**4,030,466**
Անհատներին տրված վարկեր		
Ոսկու գրավով ապահովված սպառողական վարկեր	1,785,440	1,490,098
Այլ սպառողական վարկեր	658,197	806,353
Ընդամենը անհատներին տրված վարկեր	**2,443,637**	**2,296,451**
Հաճախորդներին տրված համախառն վարկեր		
Արժեզրկման գծով պահուստ	(74,114)	(74,287)
Հաճախորդներին տրված զուտ վարկեր	**6,124,985**	**6,252,630**

Ստորև ներկայացված է արժեզրկման գծով պահուստի շարժը ըստ հաճախորդներին տրված վարկերի դասերի 2017թ. դեկտեմբերի 31-ին և 2016թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարիների ընթացքում:

հազար դրամ	2017թ.	2016թ.
Հաճախորդներին տրված վարկեր		
Մնացորդը տարեսկզբին	74,286	90,351
Զուտ ծախս	(32,047)	12,914
Դուրսգրումներ	(49,713)	(109,229)
Հակադարձումներ	81,588	80,250
Մնացորդը տարեվերջին	**74,113**	**74,286**

2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ արժեզրկված վարկերի գծով հաշվեգրված տոկոսները կազմում են 70,255 հազար դրամ (31 դեկտեմբերի 2016թ.՝ 66,791 հազար դրամ):

(ա) Հաճախորդներին տրված վարկերի պորտֆելի որակական ցուցանիշներ

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է տեղեկատվություն հաճախորդներին տրված վարկերի պորտֆելի որակական ցուցանիշների վերաբերյալ 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

	Համախառն վարկեր հազար դրամ	Արժեզրկման պահուստ հազար դրամ	Զուտ վարկեր հազար դրամ	Համախառն վարկերի արժեզրկում %
Իրավաբանական անձանց տրված վարկեր				
Վարկեր խոշոր ընկերություններին				
- ոչ ժամկետանց	1,888,769	(18,888)	1,869,881	
-30 օրից ավել, բայց 90 օրից պակաս ժամկետանց	-	-	-	
Ընդամենը վարկեր խոշոր ընկերություններին	**1,888,769**	**(18,888)**	**1,869,881**	**1%**
Վարկեր ԼՂՀ պետական մարմիններին				
- ոչ ժամկետանց	1,795,331	(17,953)	1,777,377	
-30 օրից ավել, բայց 90 օրից պակաս ժամկետանց	-	-	-	
Ընդամենը վարկեր փ ԼՂՀ պետական մարմիններին	**1,795,331**	**(17,953)**	**1,777,377**	
Վարկեր փոքր և միջին չափի ընկերություններին				
- ոչ ժամկետանց	71,363	(714)	70,649	
-30 օրից ավել, բայց 90 օրից պակաս ժամկետանց	-	-	-	
-ավելի քան 180 օր ժամկետանց	-	-	-	
Ընդամենը վարկեր փոքր և միջին չափի ընկերություններին	**71,363**	**(714)**	**70,649**	**1%**
Ընդամենը իրավաբանական անձանց տրված վարկեր	**3,755,462**	**(37,555)**	**3,717,907**	**1%**
Անհատներին տրված վարկեր				
Ոսկու գրավով ապահովված սպառողական վարկեր				
- ոչ ժամկետանց	1,767,331	(24,675)	1,742,657	
- 0 օրից ավել, բայց 30 օրից պակաս ժամկետանց	9,188	(919)	8,269	
-30 օրից ավել, բայց 90 օրից պակաս ժամկետանց	406	(41)	365	
- 90 օրից ավել, բայց 180 օրից պակաս ժամկետանց	7,274	(2,183)	5,091	
- ավելի քան 180 օր ժամկետանց	1,240	(620)	620	
Ընդամենը ոսկու գրավով ապահովված սպառողական վարկեր	**1,785,440**	**(28,437)**	**1,757,002**	**2%**
Այլ սպառողական վարկեր				
- ոչ ժամկետանց	648,785	(6,602)	642,183	
- 0 օրից ավել, բայց 30 օրից պակաս ժամկետանց	353	(35)	318	
-30 օրից ավել, բայց 90 օրից պակաս ժամկետանց	3,271	(327)	2,944	
- 90 օրից ավել, բայց 180 օրից պակաս ժամկետանց	5,788	(1,158)	4,631	
- ավելի քան 180 օր ժամկետանց	-	-	-	
Ընդամենը այլ սպառողական վարկեր	**658,197**	**(8,122)**	**650,075**	**1%**
Ընդամենը անհատներին տրված վարկեր	**2,443,637**	**(36,559)**	**2,407,078**	**2%**
Ընդամենը հաճախորդներին տրված վարկեր	**6,199,099**	**(74,114)**	**6,124,985**	**1%**

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է տեղեկատվություն հաճախորդներին տրված վարկերի պորտֆելի որակական ցուցանիշների վերաբերյալ 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

	Համախառն վարկեր հազար դրամ	Արժեզրկման պահուստ հազար դրամ	Զուտ վարկեր հազար դրամ	Համախառն վարկերի արժեզրկում %
Իրավաբանական անձանց տրված վարկեր				
Վարկեր խոշոր ընկերություններին				
- ոչ ժամկետանց	2,322,035	(23,220)	2,298,815	
-30 օրից ավել, բայց 90 օրից պակաս ժամկետանց	-	-	-	
Ընդամենը վարկեր խոշոր ընկերություններին	**2,322,035**	**(23,220)**	**2,298,815**	**1%**
Վարկեր ԼՂՀ պետական մարմիններին				
- 0 օրից ավել, բայց 30 օրից պակաս ժամկետանց	1,669,282	(16,693)	1,652,589	
-30 օրից ավել, բայց 90 օրից պակաս ժամկետանց	-	-	-	
Ընդամենը վարկեր փ ԼՂՀ պետական մարմիններին	**1,669,282**	**(16,693)**	**1,652,589**	**1%**
Վարկեր փոքր և միջին չափի ընկերություններին				
- ոչ ժամկետանց	39,148	(707)	38,441	
- 0 օրից ավել, բայց 30 օրից պակաս ժամկետանց	-	-	-	
-30 օրից ավել, բայց 90 օրից պակաս ժամկետանց	-	-	-	
Ընդամենը վարկեր փոքր և միջին չափի ընկերություններին	**39,148**	**(707)**	**38,441**	**2%**
Ընդամենը իրավաբանական անձանց տրված վարկեր	**4,030,466**	**(40,620)**	**3,989,845**	**1%**
Անհատներին տրված վարկեր				
Ոսկու գրավով ապահովված սպառողական վարկեր				
- ոչ ժամկետանց	1,475,733	(19,369)	1,456,364	
- 0 օրից ավել, բայց 30 օրից պակաս ժամկետանց	6,281	(628)	5,653	
-30 օրից ավել, բայց 90 օրից պակաս ժամկետանց	2,352	(235)	2,116	
- 90 օրից ավել, բայց 180 օրից պակաս ժամկետանց	2,802	(733)	2,069	
- ավելի քան 180 օր ժամկետանց	2,930	(1,465)	1,465	
Ընդամենը ոսկու գրավով ապահովված սպառողական վարկեր	**1,490,098**	**(22,430)**	**1,467,668**	**2%**
Այլ սպառողական վարկեր				
- ոչ ժամկետանց	801,308	(10,227)	791,081	
- 0 օրից ավել, բայց 30 օրից պակաս ժամկետանց	-	-	-	
-30 օրից ավել, բայց 90 օրից պակաս ժամկետանց	-	-	-	
- 90 օրից ավել, բայց 180 օրից պակաս ժամկետանց	5,044	(1,009)	4,035	
- ավելի քան 180 օր ժամկետանց	-	-	-	
Ընդամենը այլ սպառողական վարկեր	**806,352**	**(11,236)**	**795,117**	**1%**
Ընդամենը անհատներին տրված վարկեր	**2,296,451**	**(33,666)**	**2,262,785**	**1%**
Ընդամենը հաճախորդներին տրված վարկեր	**6,326,916**	**(74,286)**	**6,252,630**	**1%**

(բ) Վարկերի արժեզրկման գնահատման համար կիրառված հիմնական ենթադրություններ և դատողություններ

(ii) Իրավաբանական անձանց տրված վարկեր

Վարկերի արժեզրկումը տեղի է ունենում վարկի սկզբնական ճանաչումից հետո տեղի ունեցած մեկ կամ մի քանի դեպքերի արդյունքում, որոնք ազդեցություն են ունենում վարկի հետ կապված դրամական միջոցների ապագա գնահատված հոսքերի վրա և որը կարելի է արժանահավատորեն գնահատել: Արժեզրկման առանձին հայտանիշ չունեցող վարկերի համար բացակայում է դրանց ուղղակիորեն վերագրելի արժեզրկման վկայություն:

Իրավաբանական անձանց տրամադրված վարկերի արժեզրկման անկողմնակալ հայտանիշներ են հանդիսանում.

- վարկային պայմանագրի ժամկետանց վճարները,
- վարկառուի ֆինանսական վիճակի էական վատթարացումը,
- տնտեսական միջավայրի վատթարացումը, բացասական փոփոխությունները վարկառուի շուկաներում:

Իրավաբանական անձանց տրված վարկերի արժեզրկման գծով պահուստը գնահատելիս Կազմակերպությունը հիմնվում է արժեզրկված վարկերի գծով դրամական միջոցների ապագա հոսքերի վերլուծության և արժեզրկման հայտանիշ չունեցող վարկերի գծով վնաս կրելու իր նախկին փորձի վրա:

Իրավաբանական անձանց տրված վարկերի գծով արժեզրկման պահուստը որոշելիս՝ ղեկավարությունը առաջնորդվում է այն հիմնական ենթադրությամբ, որ ոչ արժեզրկված վարկերի գծով կձևավորվի 1% հավաքական պահուստ՝ հաշվի առնելով տնտեսական միջավայրը և շուկայում վնաս կրելու փորձը:

Այս գնահատումների փոփոխությունները կարող են ազդեցություն ունենալ վարկերի արժեզրկման գծով պահուստի վրա:

(iii) Անհատներին տրված վարկեր

Անհատներին տրված վարկերի գծով արժեզրկումը գնահատելիս Կազմակերպությունը հիմնվում է յուրաքանչյուր տեսակի վարկերի գծով վնաս կրելու իր նախկին փորձի վրա: Անհատներին տրված վարկերի գծով արժեզրկման պահուստը որոշելիս ղեկավարությունն առաջնորդվում է այն հիմնական ենթադրությամբ, որ ոսկու գրավով ու այլ սպառողական վարկերի հետ կապված նախորդ ժամանակաշրջանների տարեկան վնասի դրույքը կազմում է 1%:

(գ) Գրավի վերլուծություն

(i) Իրավաբանական անձանց տրված վարկեր

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է իրավաբանական անձանց տրված վարկերի պորտֆելի վերլուծությունը (առանց արժեզրկման) ըստ գրավի տեսակների 2017թ. և 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

	2017թ. հազար դրամ	Վարկային պորտֆելի %	2016թ. հազար դրամ	Վարկային պորտֆելի %
Անշարժ գույք	1,923,753	52%	2,010,323	50%
Պետական երաշխիք	1,770,278	48%	1,742,564	44%
Այլ գրավ	17,338	0.5%	228,277	6%
	3,711,369	**100%**	**3,981,164**	**100%**

Վերը աղյուսակում բերվող գումարներն իրենցից ներկայացնում են վարկերի հաշվեկշռային արժեքը և պարտադիր չէ, որ արտացոլեն գրավի իրական արժեքը:

(ii) Անհատներին տրված վարկեր

Սպառողական վարկերն ապահովված են ոսկու գրավով: Այլ սպառողական վարկերն ապահովված են հիմնականում անշարժ գույքով:

(դ) Վարկային պորտֆելի աշխարհագրական և ըստ տնտեսության ճյուղերի վերլուծություն

Վարկերը տրամադրվել են հիմնականում Հայաստանի Հանրապետությունում գտնվող հաճախորդներին, որոնք իրենց գործունեությունը ծավալել են տնտեսության հետևյալ ճյուղերում.

հազար դրամ	**2017թ.**	**2016թ.**
Առևտուր	1,731,041	1,960,435
Էներգետիկա	-	100,757
Սննդի արդյունաբերություն	224,224	237,846
Շինարարություն	-	60,793
Տնտեսության այլ ճյուղեր	1,804,091	2,071,358
Անհատներին տրված վարկեր	2,439,743	1,895,727
	6,199,099	**6,326,916**
Արժեզրկման գծով պահուստ	(74,114)	(74,286)
	6,124,985	**6,252,630**

(ե) Վարկերի ժամկետայնություն

Վարկային պորտֆելի ժամկետայնության վերլուծությունը ներկայացված է ծանոթագրություն 17-ի (դ) կետում, որտեղ արտացոլված է հաշվետու ամսաթվից մինչև վարկերի պայմանագրով նախատեսված մարման ժամկետն ընկած ժամանակահատվածը:

13 Վաճառքի համար պահվող ակտիվներ

հազար դրամ	2017թ.	2016թ.
Վաճառքի համար պահվող ակտիվներ	39,451	39,451
	39,451	**39,451**

2017թ. ընթացքում Կազմակերպությունը ձեռք է բերել 39,451 հազար դրամ ընդհանուր գումարով ակտիվ՝ իրավաբանական անձին տրված վարկերի դիմաց ընդունված գրավի նկատմամբ վերահսկողության իրավունք ստանալու միջոցով (2016թ-ին՝ 39,451 հազար դրամ):

14 Վարկեր և փոխառություններ

Սույն ծանոթագրությունում ներկայացված է տեղեկատվություն Կազմակերպության ամորտիզացված արժեքով չափվող տոկոսակիր վարկերի և փոխառությունների պայմանագրային պայմանների մասին: Տոկոսադրույքի, արտարժույթի և իրացվելիության ռիսկերին Կազմակերպության ենթարկվածության վերաբերյալ առավել մանրամասն տեղեկատվությունը ներկայացված է ծանոթագրություն 17-ում:

հազար դրամ	2017թ.	2016թ.
Ոչ ընթացիկ պարտավորություններ		
Գրավով չապահովված փոխառություններ կապակցված կողմերից	4,643,823	4,896,822
Ընդամենը	**4,643,823**	**4,896,822**
Ընթացիկ պարտավորություններ		
Գրավով չապահովված փոխառություններ կապակցված կողմերից	1,479,946	1,226,838
Ընդամենը	**1,479,946**	**1,226,838**
Ընդամենը վարկեր և փոխառություններ	**6,123,769**	**6,123,660**

Ստորև ներկայացված են կապակցված կողմերից փոխառությունների համար գործող պայմանները:

հազար դրամ	Արժույթ	Անվ. տոկոսադր.	Մարման տարին	2017թ. անվանական. արժեք*	2017թ. հաշվեկշռ. արժեք	2016թ. անվանական. արժեք*	2016թ. հաշվեկշռ. արժեք
Քարավան ՍՊԸ	ՀՀ դրամ	8-10	2018-2024	4,645,000	4,645,000	4,645,000	4,645,000
Հակոբյան Հակոբ	ՀՀ դրամ	9-10	2018-2021	950,000	950,000	950,000	950,000
Հակոբյան Հակոբ	ԱՄՆ դոլ.	8.5-9	2018-2020	387,280	387,280	387,152	387,152

* Աղյուսակում նշված անվանական արժեքը ներառում է մայր գումարը և հաշվեգրված տոկոսները:

** Փոխառությունների գնահատված իրական արժեքը մոտավորապես հավասար է դրանց հաշվեկշռային արժեքին:

(ա) Փոխառությունների կենտրոնացում

2017թ. դեկտեմբերի 31-ի և 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Կազմակերպությունն ունի փոխառություններ մեկ անհատից և մեկ կազմակերպությունից որոնց մնացորդները գերազանցում էին Կազմակերպության սեփական կապիտալի 10%-ը:

15 Ռեպո համաձայնագրեր բանկերի հետ

Ռեպո համաձայնագիրը կնքվել են Հայբիզնեսբանկ ՓԲԸ հետ՝ մինչև 29/01/2018թ. մարման ժամկետով: Համաձայն պայմանագրի Ընկերությունը մինչև մարման ժամկետը վճարելու է 7,715,023 ՀՀ դրամ ռեպո տոկոսագումար:

հազար դրամ	**2017թ.**	**2016թ.**
Ռեպո համաձայնագրեր բանկերի հետ	1,220,206	1,011,762
Ընդամենը ռեպո համաձայնագրեր	**1,220,206**	**1,011,762**

16 Այլ պարտավորություններ

հազար դրամ	**2017թ.**	**2016թ.**
Արձակուրդային պահուստ	48,590	51,032
Վճարվելիք շահութահարկ	45,969	40,111
Այլ վճարվելիք հարկեր	35,446	18,501
Փոխառությունների գծով պարտ. պահուստներ	9,058	9,195
Մատակարարներին վճարվելիք գումարներ	6,864	6,311
Այլ ոչ ֆինանսական պարտավորություններ	218	111
Ընդամենը այլ պարտավորություններ	**146,145**	**125,260**

17 Բաժնետիրական կապիտալ

(ա) Թողարկված կապիտալ

Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 1,700,000 հազար դրամ:

(բ) Շահաբաժիններ

Ընկերության մասնակիցները իրավունք ունեն ժամանակ առ ժամանակ ստանալ հայտարարված շահաբաժինները և ընդհանուր ժողովում յուրաքանչյուր մասնակից ունի իր բաժնեմասին համապատասխան ձայների քանակ:
Վճարման ենթակա շահաբաժինները սահմանափակվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված Կազմակերպության առավելագույն չբաշխված շահույթի չափով: ՀՀ օրենսդրության համաձայն հաշվետու ամսաթվի դրությամբ բաշխման ենթակա պահուստները կազմում էին 930,179 հազար դրամ (2016 թ-ին՝ 430,974 հազար դրամ): 2016թ-ի ընթացքում 1,500,000 հազար դրամ կուտակված շահույթ ներդրվել է որպես կանոնադրական կապիտալ: Հաշվետու ամսաթվի դրությամբ շահաբաժիններ չեն հայտարարվել:

18 Ռիսկերի կառավարում

Ռիսկերի կառավարումն էական գործոն է բանկային ոլորտի համար և Կազմակերպության գործառնությունների կարևոր տարր է: Հիմնական ռիսկերը, որոնց ենթարկվում է Կազմակերպությունը, կապված են շուկայական, վարկային և իրացվելիության ռիսկերի հետ:

(ա) Ռիսկերի կառավարման քաղաքականություն և ընթացակարգեր

Կազմակերպության ռիսկերի կառավարման քաղաքականության նպատակն է բացահայտել, վերլուծել և կառավարել այն ռիսկերը, որոնց ենթարկվում է Կազմակերպությունը, սահմանել ռիսկերի համապատասխան սահմանաչափեր և վերահսկման մեխանիզմներ, ինչպես նաև շարունակաբար վերահսկել ռիսկերի մակարդակները և դրանց համապատասխանությունը որոշված սահմանաչափերին: Ռիսկերի կառավարման քաղաքականությունը և ընթացակարգերը կանոնավոր կերպով վերանայվում են՝ շուկայական պայմանների, առաջարկվող պրոդուկտների ու ծառայությունների և ընդունված լավագույն մոտեցման փոփոխություններն արտացոլելու նպատակով:

Ռիսկի կառավարումը իրականացնում է Կազմակերպության ղեկավար անձնակազմը՝ առաջնորդվելով Խորհրդի կողմից հաստատված քաղաքականությամբ: Ղեկավարությունը ախտորոշում, գնահատում և հեջավորում է ֆինանսական ռիսկերը՝ սերտորեն համագործակցելով Կազմակերպության գործառնական միավորների հետ: Խորհուրդը տրամադրում է ուղեցույցներ ինչպես ընդհանուր վերցրած ռիսկերի կառավարման համար, այնպես էլ առանձնահատուկ բնագավառների համար, ինչպես օրինակ փոխարժեքային ռիսկը, տոկոսադրույքի ռիսկը, ածանցյալ և ոչ ածանցյալ ֆինանսական գործիքների կիրառումը: Բացի այդ, ներքին աուդիտը պատասխանատու է ռիսկի կառավարման և վերահսկողության միջավայրի անկախ վերահսկողության համար:

(բ) Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկը ֆինանսական գործիքի իրական արժեքի կամ դրանից ստացվող դրամական միջոցների ապագա հոսքերի տատանման ռիսկն է շուկայական գների փոփոխության արդյունքում: Շուկայական ռիսկը ներառում է արտարժույթի, տոկոսադրույքի և այլ գնային ռիսկերը: Շուկայական ռիսկն առաջանում է տոկոսադրույքի, արտարժույթի և բաժնային ֆինանսական գործիքների բաց դիրքերի գծով, որոնք ենթարկվում են շուկայի ընդհանուր և առանձին փոփոխություններին ու շուկայական գների փոփոխությունների ազդեցությանը:

Շուկայական ռիսկի կառավարման նպատակը ռիսկի այնպիսի կառավարումն ու վերահսկումն են, որոնք թույլ կտան պահպանել այս ռիսկին ենթարկվածության աստիճանը ընդունելի սահմաններում՝ միաժամանակ ապահովելով ռիսկի դիմաց եկամտաբերության օպտիմալացումը:

Շուկայական ռիսկի կառավարման համար պատասխանատվություն է կրում Կազմակերպության ղեկավար անձնակազմը:

Շուկայական ռիսկը Կազմակերպությունը կառավարում է սահմանելով բաց դիրքի սահմանաչափեր ֆինանսական գործիքների, տոկոսադրույքի ժամկետայնության ու արտարժութային դիրքերի գծով:

(i) Տոկոսադրույքի ռիսկ

Տոկոսադրույքի ռիսկը ֆինանսական գործիքի իրական արժեքի կամ դրանից ստացվող դրամական միջոցների ապագա հոսքերի տատանման ռիսկն է շուկայական գների փոփոխության արդյունքում: Կազմակերպությունը ենթարկվում է իր ֆինանսական վիճակի և դրամական միջոցների հոսքերի գերակայող շուկայական տոկոսադրույքների տատանումների ազդեցությանը: Նման տատանումները կարող են ավելացնել տոկոսային մարժան, սակայն կարող են նաև նվազեցնել կամ հանգեցնել վնասների՝ տոկոսադրույքների անսպասելի փոփոխության դեպքում:

Տոկոսադրույքների վերանայման ժամկետների վերլուծություն

Տոկոսադրույքի ռիսկը հիմնականում կառավարվում է տոկոսադրույքների փոփոխությունների մոնիտորինգի միջոցով: Ստորև ամփոփ կերպով ներկայացված է տոկոսադրույքների վերանայման ժամկետների վերլուծությունը հիմնական ֆինանսական գործիքների համար:

հազար դրամ	**Մինչև 3 ամիս**	**3 ամսից 1 տարի**	**1-5 տարի**	**Ավելի քան 5 տարի**	**Հաշվեկշռ. արժեք**
31 դեկտեմբերի 2017թ.					
ԱԿՏԻՎՆԵՐ					
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	70,379	-	-	-	70,379
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ	-	-	-	1,401,717	1,401,717
Ժամկետային ավանդներ բանկերում	-	1,070,000	1,581,578	-	2,651,578
Հաճախորդներին տրված վարկեր	-	2,047,946	3,739,975	337,064	6,124,985
	70,379	**3,117,946**	**5,321,553**	**1,738,781**	**10,248,659**
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ					
Վարկեր և փոխառություններ	-	1,479,946	4,273,182	370,641	6,123,769
Ռեպո համաձայագրեր	1,220,206	-	-	-	1,220,206
	1,220,206	1,479,946	4,273,182	370,641	7,343,975
Տարբերություն	**(1,149,827)**	**1,638,000**	**1,048,371**	**1,368,140**	**2,904,684**

հազար դրամ	**Մինչև 3 ամիս**	**3 ամսից 1 տարի**	**1-5 տարի**	**Ավելի քան 5 տարի**	**Հաշվեկշռ. արժեք**
31 դեկտեմբերի 2016թ.					
ԱԿՏԻՎՆԵՐ					
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	15,377	-	-	-	15,377
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ	-	-	-	1,311,994	1,311,994
Ժամկետային ավանդներ բանկերում	-	1,932,549	-	-	1,932,549
Հաճախորդներին տրված վարկեր	-	7,275	6,072,087	173,268	6,252,630
	15,377	**1,939,824**	**6,072,087**	**1,485,262**	**9,512,550**
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ					
Վարկեր և փոխառություններ	199,991	1,027,280	4,066,198	830,191	6,123,660
Ռեպո համաձայագրեր	1,011,762	-	-	-	1,011,762
	1,211,753	**1,027,280**	**4,066,198**	**830,191**	**7,135,422**
Տարբերություն	**(1,196,376)**	**912,544**	**2,005,889**	**655,071**	**2,377,128**

Միջին տոկոսադրույքներ

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են Կազմակերպության տոկոսակիր ակտիվների և պարտավորությունների միջին արդյունավետ տոկոսադրույքները 2017թ. և 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ: Այս տոկոսադրույքներն իրենցից ներկայացնում են մինչև այս ակտիվների և պարտավորությունների մարման ժամկետն ընկած ժամանակահատվածի մոտավոր եկամտաբերությունը:

	2017թ. Միջին արդյունավետ տոկոսադրույք, %		2016թ. Միջին արդյունավետ տոկոսադրույք, %	
	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար
Տոկոսակիր ակտիվներ				
Ընթացիկ հաշիվներ	1.2%	0%	4%	0%
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ	7.88%	0%	16.00%	0%
Ժամկետային ավանդներ բանկերում	14.3%	7%	16.5%	0%
Հաճախորդներին տրված վարկեր	19.3%	14.5%	18.46%	15.5%
Տոկոսակիր պարտավորություններ				
Վարկեր և փոխառություններ				
- Գրավով չապահովված փոխառություններ կապակցված կողմերից	9.1%	8.8%	9%	9%
- Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	7.3%	0%	12.5%	0%

(ii) Արտարժույթի ռիսկ

Կազմակերպությունն ունի մի շարք արտարժույթներով արտահայտված ակտիվներ և պարտավորություններ: Արտարժույթի ռիսկը ֆինանսական գործիքի իրական արժեքի կամ դրանից ստացվող դրամական միջոցների ապագա հոսքերի տատանման ռիսկն է արտարժույթի փոխարժեքների փոփոխության արդյունքում:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է ֆինանսական ակտիվների և պարտավորությունների կառուցվածքն ըստ արժույթների:

հազար դրամ	**2017թ. ԱՄՆ դոլար**	**2016թ. ԱՄՆ դոլար**
Ակտիվներ		
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	-	-
Հաճախորդներին տրված վարկեր	258,187	387,152
Ընդամենը ակտիվներ	**258,187**	**387,152**
Պարտավորություններ		
Փոխառություններ	387,280	387,152
Ընդամենը պարտավորություններ	**387280**	**387,152**
Զուտ դիրքերը առ 31 դեկտեմբերի	**(129,093)**	**-**

2017թ. և 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ դրամի փոխարժեքի ամրապնդումը հետևյալ արտարժույթների նկատմամբ կավելացներ (կնվազեցներ) սեփական կապիտալը և շահույթը կամ վնասը ստորև ներկայացված գումարների չափով: Այս վերլուծությունը հիմնված է արտարժույթների փոխարժեքների տատանումների վրա, որոնք Կազմակերպությունը դիտարկում է որպես հնարավոր հաշվետու ժամանակաշրջանի վերջում: Վերլուծությունը ենթադրում է, որ մյուս բոլոր փոփոխականները, մասնավորապես տոկոսադրույքները, կմնան անփոփոխ:

հազար դրամ	2017թ.		2016թ.	
	Շահույթ կամ վնաս	Սեփական կապիտալ	Շահույթ կամ վնաս	Սեփական կապիտալ
ԱՄՆ դոլարի փոխարժեքի 10% արժևորում դրամի նկատմամբ	(12,909)	(12,909)	-	-

2017թ. և 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ դրամի փոխարժեքի արժեզրկումը վերոնշյալ արտարժույթների նկատմամբ կունենար գումարային առումով նույն, սակայն հակառակ ազդեցություն վերը նշված գումարների վրա՝ ելնելով այն ենթադրությունից, որ մյուս բոլոր փոփոխականները կմնան անփոփոխ:

(գ) Վարկային ռիսկ

Վարկային ռիսկը ֆինանսական վնաս կրելու ռիսկն է, երբ փոխառուն կամ ֆինանսական գործիքի պայմանագրային կողմն ի վիճակի չի լինում կատարել իր պայմանագրային պարտականությունները Կազմակերպության նկատմամբ: Կազմակերպությունը մշակել է քաղաքականություն և ընթացակարգեր վարկային ռիսկը կառավարելու համար (թե՛ ճանաչված ֆինանսական ակտիվների և թե՛ չճանաչված պայմանագրային պարտավորվածությունների համար):

Կազմակերպությունը ղեկավարում, սահմանափակում և վերահսկում է ցանկացած բացահայտված վարկային ռիսկի կենտրոնացումները՝ մասնավորապես, մեկ փոխառուի կամ փոխառուների խմբի, ինչպես նաև արդյունաբերական և աշխարհագրական սեգմենտների կտրվածքով:

Վարկային ռիսկի մակարդակը վերահսկելու նպատակով Կազմակերպությունը սահմանում է մեկ փոխառուի կամ փոխառուների խմբի նկատմամբ ռիսկի ընդունելի մակարդակի սահմանաչափերը: Նման ռիսկերը պարբերաբար վերահսկվում են և ենթակա են տարեկան, իսկ անհրաժեշտության դեպքում, ավելի հաճախակի վերանայման:

Վարկային ռիսկի չափը կառավարվում է նաև փոխառուների և հնարավոր փոխառուների՝ մայր գումարի և տոկոսավճարների վճարման հնարավորության վերլուծության և, անհրաժեշտության դեպքում, սահմանաչափերի փոփոխության միջոցով:

Կազմակերպության վարկային ռիսկի առավելագույն մակարդակը որպես կանոն արտացոլվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքներում և չճանաչված պայմանագրային պարտավորվածություններում: Ակտիվների և պարտավորությունների հնարավոր հաշվանցումն էական ազդեցություն չունի պոտենցիալ վարկային ռիսկի նվազեցման վրա:

Ստորև ներկայացված է ֆինանսական ակտիվների գծով ռիսկի առավելագույն աստիճանը հաշվետու ամսաթվի դրությամբ:

հազար դրամ	2017թ.	2016թ.
ԱԿՏԻՎՆԵՐ		
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	70,379	15,377
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ	1,401,717	1,311,994
Ժամկետային ավանդներ բանկերում	2,651,578	1,932,549
Հաճախորդներին տրված վարկեր	6,124,985	6,252,630
Վարկային ռիսկի ընդհանուր առավելագույն աստիճանը	**10,248,659**	**9,512,550**

Հաճախորդներին տրված վարկերի գծով վարկային ռիսկի կենտրոնացվածության վերլուծությունը ներկայացված է ծանոթագրություն 12-ում:

Չճանաչված պայմանագրային պարտավորվածությունների գծով վարկային ռիսկի առավելագույն աստիճանը հաշվետու ամսաթվի դրությամբ ներկայացված է ծանոթագրություն 19-ում:

(դ) Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկը ենթադրում է, որ Կազմակերպությունը կունենա դժվարություններ ֆինանսական գործիքների հետ կապված պարտականությունները կատարելիս, որոնք մարվում են դրամական միջոցների կամ մեկ այլ ֆինանսական ակտիվի միջոցով: Իրացվելիության ռիսկն առաջանում է ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության անհամապատասխանության դեպքում: Ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության և տոկոսադրույքների համապատասխանությունը և/կամ վերահսկվող անհամապատասխանությունը իրացվելիության կառավարման էական գործոն է: Ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության ամբողջական համապատասխանությունը սովորական չէ ֆինանսական կազմակերպությունների համար՝ պայմանավորված իրականացվող գործարքների տարաբնույթությամբ և ժամկետների անորոշությամբ: Անհամապատասխանությունը հնարավորություն է տալիս բարձրացնել շահութաբերությունը, սակայն կարող է նաև մեծացնել վնաս կրելու ռիսկը:

Կազմակերպության կողմից իրացվելիության ռիսկի կառավարման նպատակն է ցանկացած պահի ապահովել բոլոր անհրաժեշտ միջոցները՝ դրամական միջոցների հոսքերի հետ կապված պարտավորությունները մարելու համար: Կազմակերպության իրացվելիության ռիսկի կառավարման քաղաքականությունն ուսումնասիրվում և հաստատվում է Խորհրդի կողմից:

Կազմակերպությունը ձգտում է ակտիվորեն պահպանել ֆինանսավորման աղբյուրների տարբերակված և կայուն կառուցվածքը, որը ներառում է այլ բանկերից ստացված երկարաժամկետ ու կարճաժամկետ վարկերը, հիմնական հաճախորդ իրավաբանական անձանց և անհատների վարկերը, ինչպես նաև բարձր իրացվելի ակտիվների տարբերակված պորտֆելը՝ իրացվելիության անկանխատեսելի պահանջներն արագ ու հեշտությամբ բավարարելու նպատակով:

Կազմակերպության իրացվելիության ռիսկի կառավարման քաղաքականությունը պահանջում է՝

- դրամական միջոցների հոսքերի կանխատեսում ըստ հիմնական արտարժույթների և դրամական միջոցների այս հոսքերի հետ կապված պահանջվող իրացվելի ակտիվների մակարդակի դիտարկում,
- ֆինանսավորման աղբյուրների տարբերակված կառուցվածքի պահպանում,
- պարտքերի կենտրոնացման և կառուցվածքի կառավարում,
- բարձր իրացվելիությամբ ակտիվների պորտֆելի վարում, որը կարելի է հեշտությամբ իրացնել որպես ապահովություն դրամական միջոցների ներհոսքի դադարեցման դեպքում,
- իրացվելիության և ֆինանսավորման ծրագրերի անընդհատության ապահովում,
- օրենսդրական պահանջների հետ իրացվելիության ցուցանիշների համապատասխանության վերահսկում:

Ստորև բերվող աղյուսակներում ներկայացված են ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորությունների, ներառյալ ֆինանսական երաշխիքների պայմանագրերի, և չճանաչված փոխառության պարտավորվածությունների գծով դրամական միջոցների չզեղչված հոսքերը՝ ըստ պայմանագրով սահմանված առավել վաղ մարման ժամկետի: Ֆինանսական երաշխիքների պայմանագրերի համար երաշխիքի առավելագույն գումարը տեղաբաշխվում է այն ամենավաղ ժամանակաշրջանում, որի ընթացքում երաշխիքը կարող հետ գնվել:

Ստորև ներկայացված է ֆինանսական պարտավորությունների ժամկետայնության վերլուծությունը 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

հազար դրամ	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-ից 3 ամիս	3-ից 6 ամիս	6-ից 12 ամիս	Ավելի քան 1 տարի	Արտահոսքի ընդհանուր համախառն գումար	Հաշվեկշռ. արժեք
31 դեկտեմբերի 2017թ.							
Ոչ ածանցյալ պարտավորություններ							
Վարկեր և փոխառություններ	-	-	96,301	1,383,645	4,643,823	6,123,769	6,123,769
Ռեպո համաձայնագրեր	1,220,206	-	-	-	-	1,220,206	1,220,206
Այլ պարտավորություններ	-	42,310	45,969	48,590	9,276	146,145	146,145
Ընդամենը պարտավորություններ	**1,220,206**	**42,310**	**142,270**	**1,432,235**	**4,653,099**	**7,490,120**	**7,490,120**

Ստորև ներկայացված է ֆինանսական պարտավորությունների ժամկետայնության վերլուծությունը 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

հազար դրամ	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-ից 3 ամիս	3-ից 6 ամիս	6-ից 12 ամիս	Ավելի քան 1 տարի	Արտահոսքի ընդհանուր համախառն գումար	Հաշվեկշռ. արժեք
31 դեկտեմբերի 2016թ.							
Ոչ ածանցյալ պարտավորություններ							
Վարկեր և փոխառություններ	-	199,991	365,182	662,098	4,896,389	6,123,660	6,123,660
Ռեպո համաձայնագրեր	1,011,762	-	-	-	-	1,011,762	1,011,762
Այլ պարտավորություններ	-	24,812	40,111	50,328	9,306	124,557	124,557
Ընդամենը պարտավորություններ	**1,011,762**	**224,803**	**405,293**	**712,426**	**4,905,695**	**7,259,979**	**7,259,979**

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում արտացոլված գումարների վերլուծությունն ըստ մարման ակնկալվող ժամկետների:

հազար դրամ	**Ցպահանջ և մինչև 1 ամիս**	**1-ից 3 ամիս**	**3 ամսից 1 տարի**	**1-ից 5 տարի**	**Ավելի քան 5 տարի**	**Անժամկետ**	**Ժամկետա նց**	**Ընդամենը**
Ոչ ածանցյալ ակտիվներ								
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	70,379	-	-	-	-	-	-	70,379
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ	-	-	-	-	1,401,717	-	-	1,401,717
Ժամկետային ավանդներ բանկերում	-	-	1,070,000	1,581,578	-	-	-	2,651,578
Հաճախորդներին տրված վարկեր	-	-	2,047,946	3,739,975	337,064	-	3,209	6,124,985
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	-	-	-	-	85,795	-	-	85,795
Վաճառքի համար պահվող ակտիվներ	-	-	-	-	-	39,451	-	39,451
Այլ ակտիվներ	-	-	11,654	-	-	-	-	11,654
Ընդամենը ակտիվներ	**70,379**	**-**	**3,129,600**	**5,321,553**	**1,824,576**	**39,451**	**3,209**	**10,385,559**
Ոչ ածանցյալ պարտավորություններ								
Վարկեր և փոխառություններ	-	-	1,479,946	4,273,182	370,641	-	-	6,123,769
Ռեպո համաձայնագրեր	-	1,220,206	-	-	-	-	-	1,220,206
Հետաձգված հարկային պարտավորություն	-	-	46,500	-	-	-	-	46,500
Այլ պարտավորություն ներ	-	42,310	94,559	9,276	-	-	-	146,145
Ընդամենը պարտավորություններ	**-**	**1,262,516**	**1,621,005**	**4,282,458**	**370,641**	**-**	**-**	**7,536,620**
Զուտ դիրքը առ 31 դեկտեմբերի 2017թ.	**70,379**	**(1,262,516)**	**1,508,595**	**1,039,095**	**1,453,935**	**39,451**	**3,209**	**2,848,939**

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում արտացոլված գումարների վերլուծությունն ըստ մարման ակնկալվող ժամկետների:

հազար դրամ	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-ից 3 ամիս	3 ամսից 1 տարի	1-ից 5 տարի	Ավելի քան 5 տարի	Անժամկետ	Ժամկետանց	Ընդամենը
Ոչ ածանցյալ ակտիվներ								
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	15,377	-	-	-	-	-	-	15,377
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ	-	-	-	-	1,311,994	-	-	1,311,994
Ժամկետային ավանդներ բանկերում	-	-	1,932,549	-	-	-	-	1,932,549
Հաճախորդներին տրված վարկեր	-	-	-	6,072,087	173,268	-	7,275	6,252,630
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	-	-	-	-	19,562	-	-	19,562
Վաճառքի համար պահվող ակտիվներ	-	-	-	-	-	39,451		39,451
Այլ ակտիվներ	-	-	13,943	-	-	-	-	13,943
Ընդամենը ակտիվներ	**15,377**	**-**	**1,946,492**	**6,072,087**	**1,504,824**	**39,451**	**7,275**	**9,585,506**
Ոչ ածանցյալ պարտավորություններ								
Վարկեր և փոխառություններ	-	199,991	1,027,280	4,066,198	830,191	-	-	6,123,660
Ռեպո համաձայնագրեր	-	1,011,762	-	-	-	-	-	1,011,762
Այլ պարտավորություն ներ	-	24,812	90,439	9,306	-	-	-	124,557
Ընդամենը պարտավորություններ	**-**	**1,236,565**	**1,117,719**	**4,075,504**	**830,191**	**-**	**-**	**7,259,979**
Զուտ դիրքը առ 31 դեկտեմբերի 2016թ.	**15,377**	**(1,236,565)**	**828,773**	**1,996,583**	**674,633**	**39,451**	**7,275**	**2,325,527**

Իրացվելիության ռիսկի կառավարման համար Կազմակերպության կողմից կիրառվող հիմնական միջոցն իրացվելի ակտիվների և ընդհանուր ակտիվների, ընթացիկ հարաբերակցության և արագ հարաբերակցության կիրառումն է: Այս նպատակով իրացվելի ակտիվների հարաբերակցությունը հաշվարկելու համար դրամական միջոցները և դրանց համարժեքները բաժանվում են ընդհանուր ակտիվների, ընթացիկ հարաբերակցությունը հաշվարկելու համար ընթացիկ ակտիվները բաժանում են ընթացիկ պարտավորությունների և արագ հարաբերակցությունը հաշվարկելու համար դրամական միջոցները և դրանց համարժեքները բաժանվում են ընթացիկ պարտավորությունների վրա: Ստորև ներկայացված են հարաբերակցությունները 2017թ. և 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

	2017թ.	2016թ.
Իրացվելի ակտիվների և ընդհանուր ակտիվների հարաբերակցություն	40%	34%
Ընթացիկ հարաբերակցություն	26%	20%
Արագ հարաբերակցություն	0.68%	0.16%

19 Կապիտալի կառավարում

Կազմակերպության կապիտալի չափի պահանջները սահմանվում և վերահսկվում են ՀՀ ԿԲ-ի կողմից:

Կազմակերպությունը, որպես կապիտալ սահմանում է տեղական օրենսդրությամբ վարկային հաստատությունների կապիտալի համար որպես բաղկացուցիչ սահմանված հոդվածները: ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված կապիտալի ներկայիս պահանջների համաձայն վարկային կազմակերպությունները պետք է ապահովեն 200,000 հազար դրամի չափով նվազագույն բաժնետիրական կապիտալ և ընդհանուր կապիտալ: 2017թ. և 2016թ. ընթացքում Կազմակերպությունը բավարարում էր կապիտալին վերաբերող օրենսդրության պահանջները: Ի լրումն, Կազմակերպությունը կառավարում է իր կապիտալը պայմանագրային սահմանափակումների պահանջներին համապատասխանելու նպատակով:

Ստորև ներկայացված է Կազմակերպության պարտավորությունների և կապիտալի հարաբերակցությունը հաշվետու ամսաթվի վերջի դրությամբ:

հազար դրամ	**2017թ.**	**2016թ.**
Ընդամենը պարտավորություններ	**7,536,620**	**7,289,997**
Հանած՝ դրամական միջոցները և դրանց համարժեքները	(70,379)	(15,377)
Զուտ պարտքը	**7,466,241**	**7,274,620**
Ընդամենը հիմնական կապիտալ	**2,848,939**	**2,294,806**
Պարտքի և սեփական կապիտալի հարաբերակցությունը	**2.62**	**3.17**

Կապիտալի կառավարման նկատմամբ կիրառվող Կազմակերպության մոտեցումը տարվա ընթացքում չի փոփոխվել:

20 Պարտավորվածություններ

Կազմակերպությունը ունի վարկեր տրամադրելու պարտավորվածություններ: Այս պարտավորվածություններն իրենցից ներկայացնում են հաստատված վարկերի տրամադրում:

Կազմակերպությունը տրամադրում է ֆինանսական երաշխիքներ՝ հաճախորդների պարտավորությունների կատարումը երրորդ անձանց նկատմամբ երաշխավորելու նպատակով: Այս պայմանագրերն ունեն ֆիքսված ժամկետներ՝ սովորաբար մինչև մեկ տարի:

Փոխառությունների գծով պարտավորվածությունների և ֆինանսական երաշխիքների հետ կապված Կազմակերպությունը կիրառում է վարկային ռիսկի կառավարման նույն քաղաքականությունը և ընթացակարգերը, որը գործում է հաճախորդներին վարկեր տրամադրելիս:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են պարտավորվածությունների պայմանագրային գումարներն ըստ դասերի: Աղյուսակում արտացոլված պարտավորվածությունների գումարները ենթադրում են, որ գումարներն ամբողջովին տրամադրված են: Աղյուսակում երաշխիքների գծով արտացոլված գումարները ներկայացնում են առավելագույն հաշվապահական վնասը, որը կգրանցվի հաշվետու ամսաթվի դրությամբ, եթե պայմանագրային կողմերը չկատարեն պայմանագրով ստանձնած պարտավորությունները:

հազար դրամ	**2017թ.**	**2016թ.**
Պայմանագրային գումար		
Վարկերի և վարկային գծերի գծով պարտավորվածություններ	2,976,254	3,137,781
Երաշխիքներ	-	-
	2,976,254	**3,137,781**

Վերը ներկայացված ընդհանուր պարտավորվածությունները պարտադիր չէ, որ իրենցից ներկայացնեն դրամական միջոցների գծով ապագա պահանջներ, քանի որ այս պարտավորվածությունները կարող են ուժը կորցնել կամ դադարել գործել մինչև վերջիններիս կատարման ժամկետը:

Այս պարտավորվածությունները ռիսկային չեն Կազմակերպության համար:

21 Պայմանական դեպքեր

(ա) Ապահովագրություն

Հայաստանի Հանրապետությունում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է, և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, դեռ չեն կիրառվում Հայաստանում: Կազմակերպությունն ամբողջապես ապահովագրված չէ գործունեության ընդհատումից և երրորդ կողմերի նկատմամբ պարտավորություններից, որոնք կարող են առաջանալ գույքին կամ շրջակա միջավայրին վնաս հասցնելուց՝ Կազմակերպության տարածքում տեղի ունեցած պատահարների կամ գործունեության հետևանքով: Քանի դեռ Կազմակերպությունը համապատասխան ձևով ապահովագրված չէ, գոյություն ունի ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է զգալի անբարենպաստ ազդեցություն ունենալ Կազմակերպության գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

(բ) Իրավական պարտավորություններ

Կազմակերպության ղեկավարությունը տեղյակ չէ Կազմակերպության դեմ հարուցված որևէ փաստացի, անավարտ կամ սպառնացող էական հայցերի մասին:

(գ) Հարկային օրենսդրության հակասություններ և երկիմաստություններ

Հայաստանի Հանրապետության հարկային համակարգը համեմատաբար նոր է և բնորոշվում է օրենսդրության, պաշտոնական պարզաբանումների և դատավճիռների հաճախակի փոփոխություններով, որոնք հաճախ հստակ չեն, հակասական են և պահանջում են մեկնաբանություններ տարբեր հարկային մարմինների կողմից: Հարկերը ենթակա են ստուգման և ուսումնասիրության մի շարք մարմինների կողմից, որոնք իրավասու են կիրառել տույժեր, տուգանքներ և տոկոսագումարներ: Հարկային օրենսդրության խախտման դեպքում հարկային մարմիններն իրավասու չեն սահմանել հարկերի գծով լրացուցիչ պարտավորություններ, տույժեր կամ տուգանքներ, եթե խախտման ամսաթվից անցել է երեք տարի:

Այս փաստերը Հայաստանում կարող են այլ երկրների համեմատությամբ էական հարկային ռիսկ առաջացնել: Կազմակերպության ղեկավարությունը գտնում է, որ համապատասխանորեն է գնահատել հարկային պարտավորությունները՝ Հայաստանի հարկային օրենսդրության իր մեկնաբանությունների, պաշտոնական հայտարարությունների և դատավճիռների հիման վրա: Այնուամենայնիվ, համապատասխան իրավասու մարմինները կարող են ունենալ այլ մեկնաբանություններ, և հետևանքները կարող են լինել էական այս ֆինանսական հաշվետվությունների համար, եթե իրավասու մարմիններին հաջողվի գործադրել իրենց մեկնաբանությունները:

22 Գործարքներ կապակցված կողմերի հետ

(ա) Վերահսկողություն

Կազմակերպության մասնակիցներն են ֆիզիկական անձինք: Կազմակերպությունը չունի վերջնական վերահսկող անձ:

(բ) Գործարքներ ղեկավարության հետ

Ստորև ներկայացված է աշխատակազմի գծով ծախսերում ներառված ընդհանուր վարձատրությունը դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար:

հազար դրամ	**2017թ.**	**2016թ.**
Ղեկավարությանը վճարված աշխատավարձ	119,492	181,997
Ընդամենը	**119,492**	**181,997**

Ստորև ներկայացված են ղեկավարության հետ գործարքների մնացորդները և միջին տոկոսադրույքները:

	2017թ. հազար դրամ	**Միջին տոկոսադրույք, %**	**2016թ. հազար դրամ**	**Միջին տոկոսադրույք, %**
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն				
Ակտիվներ				
Հաճախորդներին տրված վարկեր (համախառն)	225,635	11%	32,324	16%
Հաճախորդներին տրված վարկերի պահուստ	2,279	1%	(327)	1%

Ստորև ներկայացված են ղեկավարության հետ գործարքների գծով շահույթում կամ վնասում արտացոլված գումարները դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար:

Հազար դրամ	2017թ.	2016թ.
Շահույթ		
Տոկոսային եկամուտ	12,116	4,310

(գ) Գործարքներ այլ կապակցված կողմերի հետ

Այլ կապակցված կողմերը ներառում են Կազմակերպության մասնակիցներին, ինչպես նաև նրանց հետ կապակցված և նրանց կողմից վերահսկվող այլ անձինք և կազմակերպությունները:

Ստորև ներկայացված են 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այլ կապակցված կողմերի հետ գործարքների մնացորդները և համապատասխան միջին տոկոսադրույքները, ինչպես նաև 2017թ-ին շահույթում կամ վնասում արտացոլված գումարները:

	Մասնակիցներ		Այլ կապակցված ընկերություններ		Ընդամենը	
	հազար դրամ	Միջին տոկոսադր., %	հազար դրամ	Միջին տոկոսադր., %	հազար դրամ	Միջին տոկոսադր., %
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն						
ԱԿՏԻՎՆԵՐ						
Հաճախորդներին տրված վարկեր (համախառն)	214,945	8%	-	0%	214,945	8%
Հաճախորդներին տրված վարկերի պահուստ	2,171	1%	-	0%	2,171	1%
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ.						
Փոխառություններ	1,337,280	10%	4,645,000	9%	5,982,280	9.5%
Տոկոսային եկամուտ	8,916	8%	-	0%	8,916	8%
Տոկոսային ծախս	127,211	10%	416,718	9%	543,929	9.5%

Ստորև ներկայացված են 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այլ կապակցված կողմերի հետ գործարքների մնացորդները և համապատասխան միջին տոկոսադրույքները, ինչպես նաև 2016թ-ին շահույթում կամ վնասում արտացոլված գումարները:

	Մասնակիցներ		Այլ կապակցված ընկերություններ		Ընդամենը
	հազար դրամ	Միջին տոկոսադր., %	հազար դրամ	Միջին տոկոսադր., %	հազար դրամ
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն					
ԱԿՏԻՎՆԵՐ					
Հաճախորդներին տրված վարկեր (համախառն)	-	0%	-	0%	-
Հաճախորդներին տրված վարկերի պահուստ	-	0%	-	0%	-
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ.					
Փոխառություններ	950,800	10%	4,645,000	9%	5,595,800
Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն					
Տոկոսային եկամուտ	-	0%	-	0%	-
Տոկոսային ծախս	127,373	10%	417,694	9%	545,066

23 Ֆինանսական ակտիվներ և պարտավորություններ. իրական արժեք և հաշվապահական հաշվառման դասակարգում

(ա) Հաշվապահական հաշվառման դասակարգում և իրական արժեք

Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների գնահատված իրական արժեքները, հաշվարկվում են կիրառելով դրամական միջոցների զեղչված հոսքերի մեթոդը դրամական միջոցների գնահատված ապագա հոսքերի հիման վրա՝ օգտագործելով հաշվետու ամսաթվի դրությամբ նմանատիպ պայմաններով գործիքի նկատմամբ կիրառելի զեղչման դրույքը:

Բոլոր ֆինանսական գործիքների գնահատված իրական արժեքը մոտավորապես հավասար է դրանց հաշվեկշռային արժեքին:

Կազմակերպությունը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում գրանցված ֆինանսական գործիքների իրական արժեքը չափելիս կիրառում է ստորև ներկայացված իրական արժեքի հիերարխիան, որն արտացոլում է չափումները կատարելիս օգտագործված ելակետային տվյալների նշանակալիությունը:

- 1-ին մակարդակ. Նույն գործիքների համար գործող շուկայում գնանշումները:
- 2-րդ մակարդակ. Գնահատման տեխնիկա, որը հիմնված է դիտարկելի ելակետային տվյալների վրա կամ ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ), կամ անուղղակիորեն (այսինքն՝ գների հիման վրա ստացվող): Այս դասակարգը ներառում է այն գործիքները, որոնց գնահատման համար կիրառվել է հետևյալը՝ գնանշվող գները նմանատիպ գործիքների համար գործող շուկայում, գնանշվող գները նույն կամ նմանատիպ գործիքների համար ակտիվ չհամարվող շուկաներում, կամ այլ գնահատման տեխնիկա, որտեղ բոլոր նշանակալի ելակետային տվյալները ուղղակիորեն կամ անուղղակիորեն դիտարկելի են շուկայական տվյալներից:
- 3-րդ մակարդակ. Գնահատման տեխնիկա, որը կիրառում է նշանակալի ոչ դիտարկելի ելակետային տվյալները: Այս դասակարգը ներառում է բոլոր այն գործիքները, որոնք գնահատվում են դիտարկելի տվյալների վրա չհիմնված ելակետային տվյալներից ելնելով, իսկ ոչ դիտարկելի ելակետային տվյալներն էական ազդեցություն ունեն գործիքի գնահատման վրա: Այս դասակարգը ներառում է այն գործիքները, որոնք գնահատվում են նմանատիպ գործիքների համար գնանշվող գների հիման վրա, որոնց գծով պահանջվում են նշանակալի դիտարկելի ճշգրտումներ կամ ենթադրություններ՝ գործիքների միջև տարբերություններն արտացոլելու նպատակով:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ իրական արժեքով չափվող վերլուծությունը՝ իրական արժեքի հիերարխիայի համապատասխան մակարդակի կտրվածքով:

հազար դրամ	1-ին մակարդակ	2-րդ մակարդակ	3-րդ մակարդակ	Ընդամենը
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ	-	1,401,717	-	1,401,717
	-	**1,401,717**	**-**	**1,401,717**

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ իրական արժեքով չափվող վերլուծությունը՝ իրական արժեքի հիերարխիայի համապատասխան մակարդակի կտրվածքով:

հազար դրամ	1-ին մակարդակ	2-րդ մակարդակ	3-րդ մակարդակ	Ընդամենը
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ	-	1,311,994	-	1,311,994
	-	**1,311,994**	**-**	**1,311,994**